Սոյն գիրքը կը հրատարակուի ազնիւ
մեկենասութեամբ՝
Տիկին ՍԻՊԻԼ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

«Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս,
Եւ մի՛ մոռնար անոր բոլոր բարիքները»:
(Սաղմոս 103.2)

Շահաւէտ գրքոյկ, որ պարունակում է

զանազան աղբիւրերից մէկտեղուած

բազում մեկնութիւններ՝

օգտակար մեր մտքի

ու լսելիքի համար:

«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐ - Զ

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ

ԳՐՔՈՅԿ ՇԱՀԱԻԷՏ

Գրաբարից աշխարհաբար փոխադրեց՝
Նորայր Պողոսեան
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Խմբագիր՝
Աստղիկ Կարապետեան
Բանասիրական գիտ. թեկնածու

Տպագրութիւն ԱՄՆ Արեւմտեան թեմի

Լոս Անջելէս

2022

Պաղտասար Դպիրի «Գրքոյկ շահաւէտ»-ի
1720 թ. հրատարակութեան տիտղոսաթերթը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք Յովնան Արք. Տէրտէրեանի 6

Նախաբան 8

ՀԱՒԱՏՔԻ ՄԱՍԻՆ 11

ՅՈՅՍԻ ՄԱՍԻՆ 20

ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ 27

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 42

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԵՕԹԸ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ 45

ԻՆԸ ԵՐԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ 47

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ 50

ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ 53

ԽՐԱՏ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐԵՐԻՆ 79

ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 96

ՉԱՓԱԾՈՅ ԵՐԿՏՈՂԵՐ 105

Համառօտ կենսագրութիւն 107

Պաղտասար Դպիրի «Ոսկեղենիկ» մատենաշարով տպագրուած գրքեր 111

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Առաջին անգամ աշխարհաբար լեզուով ընթերցողին կը ներկայացուի ուշ միջնադարեան մեր մեծագոյն հեղինակներէն՝ Պաղտասար Դպիրի «Գրքոյկ Շահաւէտ» բացառիկ արժէքը ունեցող աշխատութիւնը, որը հոգեշահ քարոզներէ եւ խրատներէ զատ քրիստոնէական կարեւորագոյն եւ հիմնարար գիտելիքներու ուսուցմանց ժողովածու մըն է։ Հեղինակը Քրիստոնէական Վարդապետութեան հետ զուգընթաց կը ներկայացնէ նաեւ այն հիմնական առաքինութիւններն ու ճշմարտութիւնները, զոր կը փնտրէ մեր մարդկային բնութիւնը, քանզի մարդ էակի հոգւոյն իրական իտէալն է գտնել Գեղեցիկը եւ հասնիլ այն Գերագոյն Բարիին, որ է Աստուած։

Հեղինակը, սոյն աշխատութեան մէջ անդրադառնալով հաւատքին՝ հետեւեալ կերպ կը ներկայացնէ, ըսելով. «Հաւատքը երանելի է դարձնում այն կրողին եւ հասցնում է անսահման բարիքի» (Պաղտասար

Դպիր)։ Իսկապէս, Քրիստոնէական հաւատքը հայեցողութիւն մը ըլլալէ աւելի կեանք է, այլապէս ամենէն խաբուսիկ պատրանքը եղած պիտի ըլլար ան գուցէ, զոր երբեւէ կը ճանչնայ մարդկային հոգին, իսկ աղօթքը՝ կրօնական կեանքի այդ էական տուրքը, ներշնչումն ու արտաշնչումն է մեր հաւատքի։

Սիրելի ընթերցող, հետեւաբար, Պաղտասար Դպիրի «Գրքոյկ Շահաւէտ» բացառիկ արժէք ունեցող այս աշխատութիւնը մեր այժմէական եւ առօրեայ կրօնական գիտելիքներուն եւ պէտքին ի նպաստ, ծառէն նոր քաղուած քաղցր պտուղին բարիքն ունի իր մէջ՝ բաշխելու համար մեր մտքի եւ հոգու քաղցին։

Յովնան Արք. Տէրտէրեան



Առաջնորդ Արեւմտեան թեմի
Մայիս 28, 2022

ՆԱԽԱԲԱՆ

18-րդ դարի Կ. Պոլսի անուանի գործիչ Պաղտասար Դպիրի քրիստոնէական ուսուցման այս երկը աշխարհաբարի է փոխադրուել «Գրգուկ շահաւէտ»-ի առաջին՝ 1720 թ. հրատարակութիւնից: Երկի ուսուցողական ոճը եւ շարադրանքը, թեմաները եւ առաջին հերթին գրքի հասցէատէրը («յաղագս օգտի որոց միտս ունին եւ լսելիս») յուշում են, որ այն ժամանակին ձեռնարկի դեր է կատարել:

Գրքոյկը քրիստոնէական ուսուցման բանալիներ է առաջադրում հաւատացեալ հայորդիներին՝ հաւատքի, յոյսի, սիրոյ, եկեղեցու խորհուրդների, խոստովանութեան եւ շատ այլ դրոյթների պարզաբանութեան համար:

Գրքոյկում արծարծուած թեմաներով հեղինակը քրիստոնէական գիտելիքների հետ մէկտեղ քայլ առ քայլ ներարկում է բարոյական նորմեր. դրանք անժամանցելի են, որ կարեւոր էին առաջին դարերում, կարեւոր էին Պաղտասար Դպիրի ապրած ժամանակներում, դրանք շատ կողմերով արդիական եւ

ուսանելի են նաեւ 21-րդ դարի ընթերցողներիս համար, ինչպէս օրինակ՝ «Հայր մեր» աղօթքի, «Երանի»-ների մեկնութիւնները, մեղքի ու խոստովանութեան, Սուրբ Հոգու եօթը պարգեւների եւ այլ դրոյթների բացատրութիւնները: Մեկնութիւններում ակնյայտ է Պաղտասար Դպիրի մանկավարժական փորձն ու հոգեւոր ամրութիւնը, որից ծնուած մտածումները առաւել մեծ ձգողութիւն են հաղորդում գրքոյկին, միաժամանակ հաստատակամութիւն են փոխանցում մեզ՝ գրքոյկը աշխարհաբար նորովի մատուցելու համար:

Հայ բանասիրութեանը Պաղտասար Դպիրը ծանօթ է նախ եւ առաջ որպէս բանաստեղծ: Սակայն ժամանակին նրա համբաւը հռչակուած էր որպէս մանկավարժ, քարոզիչ, մեկնիչ-աստուածաբան: Նրա յատկապէս քրիստոնէական եւ քերականական ժառանգութիւնը լիովին բաւարար է՝ հայ գրաւոր մտքի անդաստանում իր արժանի բարձր տեղում վերահաստատելու համար, ինչպիսին որ էր իր ժամանակին՝ հոգեւոր եւ մանկավարժական հեղինակութեամբ, ազդեցիկ խօսքով, եւ ինչպիսին արժանի է, որ ընդունուի հայ ընթերցողի կողմից նաեւ այսօր ու մշտապէս:

Հաւատարիմ իր ստեղծման նպատակադրումին՝ «Ոսկեղենիկ» մատենաշարը փորձում է նորովի շրջանառութեան մէջ դնել մեր մտածողների՝ ինչ-ինչ պատճառներով ներկայում ոչ անհրաժեշտ չափով յայտնի երկեր, ինչպիսին որ է Պաղտասար Դպիրի «Գրքոյկ շահաւէտ»-ը, նոր ուղի տալ այդ ստեղծագործութիւններին, 21-րդ դարի ընթերցողին հաղորդակից դարձնել հոգեւոր ու գրաւոր այդ մարգարտահատիկներին:

Շնորհակալութեամբ պիտի նշենք Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, որի օրհնութեամբ եւ հոգածութեամբ լոյս աշխարհ եկան թէ՛ այս եւ թէ՛ «Ոսկեղենիկի» նախորդ 5 հատորները (ցանկը տե՛ս գրքի վերջում)՝ ի վայելումն հոգեւոր սերմնահատիկներ փնտրող ընթերցասէր հայորդիների, քանզի անկասկածելի է՝ հոգեւոր սերմերն են, որ կը ծլարձակեն ու ճանապարհ կը պատրաստեն մեր ազգի հոգեւոր վերելքի ու միասնութեան, հայրենիքի ու եկեղեցու բարգաւաճման համար:

Ն. Պ.

ՀԱԻԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Բոլոր կարեւոր բաներից առաջ քրիստոնեան նախ պէտք է ճանաչի իր հաւատքը, որը դաւանում է: Այսինքն՝ պէտք է իմանայ, թէ ինչ է քրիստոնէական հաւատքը, եւ ինչ է այն ուսուցանում:

Արդ, քրիստոնէական հաւատքը աստուածային մի պարգեւ է, որ մեր մէջ է հեղուել Աստծուց եւ ուսուցանում է հաստատապէս հաւատալ նրան, ինչը որ մեզ պատգամել է Աստուած Սուրբ Գրքի միջոցով:

Հաւատքը երեք մաս ունի: Առաջինը Աստծու Երրորդութեան եւ միութեան մասին է: Երկրորդը Աստծու Որդու մարդեղութեան մասին է: Երրորդը Քրիստոսի Սուրբ եկեղեցու ճշմարտութեան մասին է:

Եւ այս մասերը իր մէջ համառօտապէս պարունակում է «ՀԱԻԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ», որ միշտ

երգում է Քրիստոսի հարսը՝ սուրբ եկեղեցին, այսպէս.

Հաւատում ենք մէկ Աստծու, Ամենակալ Հօրը, երկնքի եւ երկրի, երեւելիների եւ աներեւոյթների Արարչին:	Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ՝ յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:
Եւ մէկ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդու՝ ծնուած Հայր Աստծուց, միածին, այսինքն՝ Հօր էութիւնից:	Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ, Միածին՝ այսինքն յէութենէ Հօր:
Աստուած՝ Աստծուց, Լոյս՝ Լոյսից, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ եւ ոչ արարած:	Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած:
Նոյն Ինքը՝ Հօր բնութիւնից, Որի միջոցով ամէն ինչ եղաւ երկնքում եւ երկրի	Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ

վրայ՝ երեւելիները եւ աներեւոյթները:

Որ յանուն մեզ՝ մարդկանց եւ մեր փրկութեան համար՝ իջաւ երկնքից, մարմնացաւ, մարդացաւ, Սուրբ Հոգով կատարելապէս ծնուեց Սուրբ Կոյս Մարիամից:

Որով ճշմարտապէս եւ ոչ կարծեցեալ կերպով առաւ մարմին, հոգի եւ միտք եւ ամէն ինչ, որ կայ մարդու մէջ:

Չարչարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով ելաւ երկինք, նստեց Հօր աջ կողմում:

երկրի, երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով:

Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալու է նոյն մարմնով եւ Հօր փառքով՝ դատելու ողջերին եւ մահացածներին: Նրա թագաւորութիւնը չունի վախճան:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատում ենք նաեւ Սուրբ Հոգուն՝ անեղին եւ կատարեալին, որ խօսեց օրէնքի եւ մարգարէների եւ Աւետարանների միջոցով: Որն իջաւ Յորդանանի վրայ, քարոզեց առաքեալների միջոցով եւ բնակութիւն հաստատեց սրբերի մէջ:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս: Որ էջն ի Հորդանան, քարոզեաց յառաքեալսն, եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատում ենք նաեւ մէկ, Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու, մէկ

Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ յառաքելական սուրբ եկեղեցի, ի մի մկրտութիւն,

մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան: Մեռելների յարության, հոգիների եւ մարմինների յաւիտենական դատաստանի, երկնքի արքայութեան եւ յաւիտենական կեանքի:

Այսքանը հաւատքի մասին էր:

Իսկ նրանք, ովքեր ասում են, թէ կար ժամանակ, երբ չկար Որդին, կամ կար ժամանակ, երբ չկար Սուրբ Հոգին, կամ ասում են, թէ ոչնչից գոյացան կամ այլ էութիւնից են Աստծու Որդին կամ Սուրբ Հոգին, եւ թէ նրանք ենթակայ են

յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Վճարին աստ բանք հաւատոյ:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ո՛չ էր Որդին, կամ էր երբեմն, յորժամ ո՛չ էր Սուրբ Հոգին, կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին, եւ թէ փոփոխելիք են կամ

փոփոխման կամ այլայլման, այնպիսիներին նզովում է Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթուղիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Այս է ուղղափառ հաւատքի ճշմարիտ սահմանումը, որը իւրաքանչիւր քրիստոնեայ պարտաւոր է իր շուրթերին ունենայ եւ ամէն օր արտասանի: Մանաւանդ պէտք է ոչ միայն խօսքերը կրկնի, այլեւ գիտակցի դրանց զօրութիւնը: Քանզի եթէ խոստովանում ես, որ քրիստոնեայ ես եւ սուրբ աւազանի հոգեւոր ծնունդով ժառանգորդ ես դարձել յաւիտենական կեանքին, ապա ուրեմն ինքդ քեզ կեղծած կը լինես, եթէ մեծ ջերմեռանդութեամբ ու ջանասիրութեամբ չուսանես եւ չիմանաս քրիստոնէական հաւատքի զօրութիւնը: Քանզի եթէ չես ճանաչում այն հաւատքը, որը դաւանում ես, ինչպէ՞ս կարող ես

պարծենալ, թէ՝ քրիստոնեայ եմ, կամ ինչպէ՞ս պիտի անհրաժեշտ պահին յանուն հաւատքիդ անգամ մահը յանձն առնես: Քանզի հաւատքն է, որ հնարաւորութիւն է տալիս մերժելու աշխարհը, մարտնչելու մեղքի ու մահուան դէմ:

Հաւատքը երանելի է դարձնում այն կրողին, հասցնում է անսահման բարիքի:

Առանց հաւատքի ոչ ոք չի կարող արդարանալ:

Բայց պէտք է իմանալ, որ հաւատքն առանց գործերի նման է անպտուղ ծառի կամ անլոյս աչքերի, որ ոչ միայն օգուտ չի ունենում, այլեւ դատապարտութեան առիթ է լինում դա ունեցողի համար: Ի՞նչ օգուտ կարող է բերել զուտ խօսքով հաւատքը, եթէ գործով կեղծում ես այն: Եթէ լոկ միայն հաւատքը ընդունելի լինէր Աստծու համար, ապա դեւերի հաւատքը գովելի կարող էր համարուել քոնի համեմատ, որոնք ոչ միայն

հաւատում են Աստծու Որդուն, ինչպէս ասում է Առաքեալը, այլ նաեւ սարսում են նրա անունից:

Ուրեմն յոյս չունենանք, թէ միայն հաւատով կը փրկուենք յաւիտենական դատապարտութիւնից: Աւելի տանելի կարող է լինել անհաւատ մարդկանց պատիժը, քան նրանց, ովքեր հաւատք ունեն առանց գործերի (Յակ. 2:20): Վերջինների համար աւելի լաւ կը լինէր, որ ճանաչած չլինէին արդարութեան ճանապարհը, քան թէ ճանաչելուց յետոյ հետ կանգնեցին իրենց աւանդուած սուրբ պատուիրանից:

Եթէ ասում ես, թէ՝ հաւատում եմ Աւետարանին, ուրեմն ինչու՞ չես հնազանդւում նրա հրամաններին: Նշանակում է ճշմարիտ հաւատացեալ չես, այլ ունայն ես ու պարծենկոտ, քանզի այն է ճշմարիտ հաւատքը, որը գործով է ցուցանւում: «Հաւատքն առանց գործերի մեռած է» (Յակ. 2:26):

Ուրեմն՝ զգոյշ եղէք, որպէսզի չլինի թէ բերանով հաւատքը հռչակէք, իսկ գործերով՝ անհաւատութիւնը:

Ճշմարտապէս նա հաւատք ունի,
Ով գործով է դա ցոյց տալիս:

ՅՈՅՍԻ ՄԱՍԻՆ

Յոյսը հանդերձեալ երանելի կեանքի ստոյգ ակնկալութիւնն է, որ խոստացել է Աստուած իր սիրելիներին:

Ինչպէս որ հաւատում ենք երկնքի ու երկրի արարիչ Աստծուն, որ Ի՛նքն է աղբիւրը ամենայն բարիքների, այնպէս էլ պէտք է հաստատապէս յուսանք, որ ինչ խնդրենք Աստծուց՝ կը ստանանք ըստ Իր խոստման:

Քրիստոս դա էր մեզ ուսուցանում, երբ ասում էր իր աշակերտներին. երբ աղօթք անէք, ասէ՛ք «Հայր մեր, որ յերկինս ես...», քանզի վստահութեամբ այդպէս գոչելը յոյսի սկիզբն է: Ուստի երբ մենք աղօթք ենք ուղղում առ Աստուած, պէտք է հաստատ յոյս ունենանք, որ մեր խնդրանքը

ստուգապէս ընդունելի՛ կը լինի, եւ Աստուած պարգեւատու կը լինի մեզ:

Իսկ թէ ինչ պիտի խնդրենք Աստծուց, յստակ տեսնում ենք «Տէրունական աղօթքի» մէջ, որը պարունակում է եօթը պատշաճ խնդրանքներ, որ համառօտ կերպով ընդգրկում են հոգու ու մարմնի բոլոր կարիքները թէ՛ այս եւ թէ՛ հանդերձեալ կեանքի համար: Եւ ահա թէ որոնք են դրանք.

Ա. «Սուրբ եղիցի անուն Քո»:

Այս ասելով խնդրում ենք, որ ամենուր մարդիկ ճանաչեն Աստծուն, պաշտեն եւ փառաւորեն Նրա անունը: Նաեւ խնդրում ենք, որ Նրա տուած շնորհներով կատարուած մեր բարեգործութիւններով փառաւորուի Նրա անունը մարդկանց կողմից, մարդիկ տեսնեն մեր բարի գործերը եւ փառաւորեն Հօրը, որ երկնքում է:

Բ. «Եկեսցէ արքայութիւն Քո»:

Խնդրում ենք, որ Իր ահարկու թագաւորութիւնը հաստատուի մեր մտքերում, որպէսզի

երբէք չմեղանչենք: Նաեւ խնդրում ենք, որ երբէք թոյլ չտայ մեզ՝ ընկնելու որեւէ այլ իշխանութեան ներքոյ, այսինքն՝ սատանայի, այլ Իր թագաւորութիւնը միշտ լինի մեզ վրայ, ինչպէս ասուեց՝ «Փնտրէ՛ք Աստծու արքայութիւնը» (Մատթ. 6:33):

Գ. «Եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի»:

Խնդրում ենք, որ ինչպէս հրեշտակները երկընքում եւ այլ արարածները երկրի վրայ միշտ շարժւում են Իր հրամանով, նմանապէս զօրացնի մեզ Իր շնորհներով, որպէսզի մեր բոլոր գործերը կատարենք Իր կամքի համաձայն: Ու նաեւ խընդրում ենք, որ Իր թագաւորութիւնը տիրապետող ու կառավարող լինի մեզ վրայ, ցանկանում ենք, որ Իր կամքը կատարուի մեր միջոցով, առաքինական վարքով:

Դ. «Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր»:

Խնդրում ենք, որ մեր ամենօրեայ պէտքերը Իր գթութեամբ տայ մեզ, չվերցնի դրանք մեզանից մեր անարժանութեան պատճառով: Նաեւ խընդրում ենք, որ Իր շնորհները, որ երկնային հաց է, ամէն ժամ պարգեւի մեզ, քանզի «տո՛ւր մեզ այսօր» ասելով՝ ողջ կեանքը նկատի ունենք: Եւ ասում ենք «զհաց մեր», քանզի հացը, որպէս աստուածային պարգեւ, մշտապէս տրուած էր մեզ նախքան մեր մեղանչելը:

Ե. «Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»:

Սա ասելով՝ խնդրում ենք, որ մեր յանցանքների դիմաց սպասուող պատիժները Իր ողորմութեամբ ների մեզ:

Բայց այստեղ պիտի զգոյշ լինել, քանզի ինչպէս աղօթքի ամենասկզբում համարձակուեցինք Հայր կոչել Աստծուն մեզ համար, ուրեմն ծաղրի արժանի կը լինենք, եթէ մեր գործերը արժանի ու համապատասխան չլինեն այդ խօսքին, այսինքն՝ ինչպէս որ վայել է Աստծու որդուն:

Նոյն կերպ ծիծաղի առարկայ կը լինենք, եթէ անտեսենք մեր եղբօր յանցանքի համար ներում խնդրելը եւ խնդրենք ներել միայն մերը:

Դա մանաւանդ անմտութիւն ու յանդգնութիւն կը լինի խաբելու Նրան, Ով քննում է մեր սիրտն ու էութիւնը: Քանզի մեր չարածը դրած կը լինենք Իր առաջ եւ կեղծիք գործած կը լինենք, երբ ասում ենք՝ «ինչպէս որ մենք ենք ներում մեր պարտապաններին, դու էլ մե՛ր մեղքերը ներիր»:

Ի՞նչ է ասում Աստուած: Ո՛վ անմիտ, դու քեզ Աստծու որդի ես կոչում, բայց դիւային գործեր ես կատարում: Եղբօրդ յանցանքները ներող ես պարծենում, բայց Կայէնի սիրտն ունես: Ի՞նչ է մտքովդ անցնում, խաբե՞լ ինձ, որ գիտեմ ամենայն ինչ լինելուց առաջ: Ասուած է, որ եթէ ներէք մարդկանց յանցանքները, ձեր երկնաւոր հայրն էլ ձեր յանցանքները կը ների: **Ների՛ր ուրեմն դու ընկերոջդ, ես էլ կը ներեմ քեզ**: Ապա թէ ոչ՝ զուր են ջանքերդ, եւ զուր են աղօթքներդ:

Զ. «Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն»:

Խնդրում ենք, որ թոյլ չտայ պարտուելու թշնամու բերած փորձութիւններից, այսինքն՝ չարի ներգործութիւնից, որը մշտապէս մարտընչում է նրանց դէմ, ովքեր յաւիտենական կեանքին են ձգտում:

Է. «Այլ փրկեա՛ զմեզ ի չարէ»:

Խնդրում ենք, որ մեզ փորձութիւններից փրկելուց յետոյ փրկի նաեւ չարի բոլոր մեքենայութիւններից, որ չլինի թէ մեր տկար բնութեան պատճառով փորձութեանն անպատրաստ լինելով՝ յաւիտենապէս կորստեան մատնուենք:

Ու նաեւ յաւելում ենք, թէ՝ «Քոնն է արքայութիւնը եւ զօրութիւնը»: Այսինքն՝ Դու՛ ես մեր թագաւորն ու իշխողը, ուրեմն ուրիշ ոչ ոք չի կարող յանդգնել տիրապետելու Քո արարածների վրայ:

Արդ, ով յոյսով աղօթում է առ Աստուած, բազում օգուտներ կը շահի իր անձի համար, քանզի յաղթահարում է տրտմութիւնը, զօրանում է փորձութիւնների դէմ եւ փրկւում նեղութիւն-

ներից։ Եւ ինչ խնդրում է Աստծուց, կը ստանայ լիապէս։ Իսկ ով երկմիտ է աղօթքի մէջ, չի կարող Աստծուց ստանալ որեւէ բան, քանզի «երկմիտ մարդն անհաստատ է իր բոլոր քայլերում» (Յակոբ, 1։8)։

Աներկմիտ յոյսը սուրբ սրտերում
Որեւէ մէկին ամօթով չի թողնում։

ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

Սէրը մտքի ունակութիւն է, որով սիրում ենք Աստծուն ամէն ինչից առաւել, եւ ընկերոջը՝ մեր անձին հաւասար, յանուն Աստծու:

Սէրը միաւորում է Աստծուն մարդու հետ, ինչպէս ասում է առաքեալը՝ «Ով սիրոյ մէջ է ապրում, բնակւում է Աստծու մէջ, եւ Աստուած էլ՝ նրա մէջ» (Յովհ. Ա. 4:16)

Սիրո՛վ Աստուած եկաւ մեզ մօտ եւ մարդու որդի դարձաւ, եւ մենք էլ սիրով ենք ընթանում դէպի Նա եւ Աստծու որդիներ ենք լինում նրա շնորհների միջոցով: Սէրը կրակի բոցերի նման է, որ բորբոքում է այն կրողին բաղձալի երանութեամբ:

Հաւատը եւ յոյսը առանց սիրոյ չեն օգնի, քանզի սէ՛րն է սկիզբը եւ վախճանը բարիքի: Եւ արդ,

ինչպէս հաւատը կայանում է Աստծուն ճանաչելով, եւ յոյսը՝ նրա պարգեւներով, այդպէս էլ սէրը վերապահուած է նրա պատգամները պահելու համար, ինչպէս ասաց Քրիստոս. «Եթէ ինձ սիրէք՝ կը պահէք իմ պատուիրանները» (Յովհ. 14:15):

Յովհաննէս Աւետարանիչը նաեւ ասում է. «Ով պահում է նրա խօսքը, Աստուծոյ սէրը նրա մէջ ճշմարտապէս կատարեալ է» (Յովհ Ա. 2:5): Այսինքն՝ Աստծու սէրը կատարելապէս նա՛ ունի, ով պահում է Նրա պատուիրանները սրտի յօժար ցանկութեամբ: Իսկ Աստծու պատուիրանները համառօտ կերպով հետեւեալն են.

Ա. Ե՛ս եմ քո Տէր Աստուածը, ինձնից բացի այլ աստուածներ չպիտի լինեն քեզ համար:

Բ. Որեւէ բանի նմանութեամբ քեզ կուռքեր չպիտի կերտես:

Գ. Յիշի՛ր շաբաթ օրը, որպէսզի սուրբ պահես այն:

Դ. Պատուի՛ր քո հօրն ու քո մօրը:

Ե. Մի՛ սպանիր:

Զ. Մի՛ շնացիր։

Է. Մի՛ գողացիր։

Ը. Սուտ վկայութիւն մի՛ տուր։

Թ. Քո Տէր Աստծու անունը զուր տեղը չպիտի արտասանես։

Ժ. Քո մերձաւորի կնոջը մի՛ ցանկացիր եւ աչք մի՛ ունեցիր նրա որեւէ բանի վրայ (Ելից 20, Օրինաց Բ. 5)։

Արդ, առաջին պատուիրանը ուսուցանում է մեզ ճանաչել Աստծուն եւ իմանալ, որ Նա՛ է մեր ստեղծողը, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Նա ստեղծեց մեզ, եւ ոչ թէ մենք եղանք» (Սաղմ. 99:3)։ Եւ ճանաչելուց յետոյ պէտք է սիրենք Նրան ամբողջ սրտով եւ երկրպագենք ամենայն յօժարութեամբ։

Գիտելի է, որ շատերը լոկ խօսքով են սիրում Աստծուն, իսկ գործով՝ քչերը միայն, ինչպէս որ Աստուած ասում է մարգարէի շուրթերով՝ «Այս ժողովուրդը բերանով, իր շրթունքներով է մեծա-

րում ինձ, բայց սրտով հեռացել ու մեկուսացել է ինձնից» (Եսայի, 29:13):

Ի՞նչ օգուտ, եթէ խօսքով ասեմ, թէ սիրում եմ Աստծուն, բայց գործերով իրականում այլ բաներ սիրեմ: Հարցնում ես՝ ի՞նչ նկատի ունես: Ասեմ. երբ մէկը նախատում է մեզ, ողջ էութեամբ ցնցւում ենք եւ չենք հանդարտւում, բայց երբ Աստծու պատուիրաններն ենք արհամարհուած տեսնում, բնաւ տրտմութիւն կամ ցաւ չենք ապ-րում: Տեսնում ենք մերձաւորին կարիքների մէջ, սակայն նրա կարիքներին գոհացում չենք տալիս մեր աւելցուկից, յանուն Աստծու սիրոյ: Պարզ է ուրեմն, որ մեզ ու մեր ունեցուածքը աւելի շատ ենք սիրում, քան Աստծուն: Եւ ինչը որ աւելի շատ ենք սիրում, այն Աստծու փոխարէն պաշտելի ենք դարձնում, քանզի սիրել Աստծուն նշանակում է պահել նրա խօսքերը, ինչպէս ասաց Քրիստոս. «Եթէ մէկը սիրում է ինձ, իմ խօսքը կը պահի Նա, ով սիրում է ինձ» (Յովհ. 14:23):

Երկրորդ պատուիրանը ուսուցանում է որեւէ բանի նմանութեամբ կուռքեր չսարքել մեզ համար ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրայ եւ Արարչի փոխարէն որեւէ մէկին չերկրպագել: Գուցէ մէկն ասի, թէ այդ դէպքում ինչպէ՞ս Քրիստոսի պատկերը ձեւաւորենք եւ պաշտենք, չէ՞ որ դա կը լինի մարդո՛ւ պատրաստածը եւ ուրեմն՝ կռապաշտութիւն: Սրա վերաբերեալ ասենք. ոչ թէ ինքնին այն պատկերն ենք պաշտում, որ ստեղծել ենք, այլ պաշտում ենք դրա նախատիպը: Ուրեմն երկրրպագում ենք Քրիստոսի պատկերը ոչ թէ որպէս նիւթեղէն մի նկար, այլ որպէս պատկեր եւ նշան Աստծու Որդու մարդեղութեան: Ուստի դա կռապաշտութիւն չէ, այլ ճշմարիտ Աստծու պաշտամունք:

Պէտք է իմանալ, որ եկեղեցու կանոններում գրուած է, թէ չպէտք է պատրաստել ստուերունակ պատկեր, այսինքն՝ կաւից, փայտից, արծաթից կամ այսպիսի այլ նիւթերից, որպէսզի հեթանոս կուռքերի նման չլինի: Այլ պէտք է ներ-

կերով նկարել, որ առանց ստուերի լինի: Ու նաեւ՝ ասելով որեւէ բանի նմանութեամբ կուռքեր չսարքես քեզ համար՝ նաեւ պատուիրում է անընդհատ ու անտեղի չյիշել Աստծու անունը ամէն չնչին առիթով, քանզի դա մեղանչում է Աստծու դէմ: Աստծու անունը մեր շուրթերից պիտի արտաբերենք ահ ու դողով եւ միայն արժանի առիթներով:

Երրորդ պատուիրանը ուսուցանում է Կիրակի եւ տէրունի միւս օրերը պատուել ու մեծարել, այսինքն՝ մարմնական գործերից հանգստանալ եւ զբաղուել միայն աստուածային գործերով՝ գնալ եկեղեցի, մասնակցել պատարագին, աղօթք անել եւ բարիք գործել, ընթերցել կամ լսել Սուրբ գիրքը, քանզի ամբողջ այդ օրը պարտաւոր ենք նուիրել Տիրոջը: Պարտաւոր ենք մանաւանդ Կիրակի օրը մտորել վեց օրերի մեր սխալների մասին, զղջումի ու խոստովանութեան միջոցով քաւել մեր գործած յանցանքները՝ ցաւ ապրելով եւ մտադրուելով այլեւս մեղք չգործել:

Եւ ի՞նչ ասեմ մեր թշուառ անձերի մասին, որ ամէն կերպ հակառակն ենք գործում Աստծու պատուիրաններից. Կիրակի ու տէրունի օրերը մարմնական հեշտասիրութեամբ ու խելացնոր արբեցութեամբ ենք ենք անցկացնում: Աստուածային Գրքերի խօսքը լսելու փոխարէն մեղանչական խօսակցութեան կամ անօգուտ բաների ենք տրւում: Ձերծ ենք մնում ֆիզիկական գործերից եւ օրը լցնում ենք զանազան չար զբաղմունքներով, մարմնական որոշ կարեւոր զբաղմունքներ էլ Կիրակի օրուան ենք թողնում: Ո՛վ կենդանական կենսակերպ ու եղկելի վարք:

Սթափուէ՛ք, եղբայրներ, զարթնէ՛ք այդ մահաբեր քնից, քանզի Տիրոջ օրը գաղտագողի է վրայ հասնելու:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ Աստուած պատուիրեց սուրբ պահել Շաբա՛թ օրը, ուրեմն ինչու՞ Կիրակին պահենք: Դրա վերաբերեալ ասենք, որ թէպէտ հնում Շաբաթ օրն էին պահում, բայց նոր օրերում առաքեալները Կիրակին սահմանեցին ի

պատիւ Քրիստոսի Յարութեան, քանզի Քրիս-տոս՝ Աստծու Որդին, որ օրէնքների եւ մարգա-րէութիւնների լրումն է, Իր գործերով ցոյց տուէց, որ այսուհետ Շաբաթ օրը չէ, որ պէտք է պահել: Իսկ թէ ինչու՞ նախ պատուիրեց [շաբաթ օրը պահել] եւ ապա փոխեց այն,- ո՞վ կարող է Տիրոջ խորքերը քննել, ինչպէս կամենայ, այնպէս էլ պատուիրում է: Տէրն ամենայն ինչ իմաստու-թեամբ է անում ու գեղեցկապէս յարդարում, մեզ համար «ինչպէ՞ս»-ն ու «ինչո՞ւ»-ն անիմանալի են:

Չորրորդ պատուիրանն ուսուցանում է պատ-ուել եւ մեծարել մեր ծնողներին, պատկառել նրանցից, բարի հնազանդութեամբ ենթարկուել նրանց հրամաններին եւ մշտապէս օգնել նրանց բոլոր կարիքների մէջ: Ուրեմն ովքեր չեն պատուում ծնողներին եւ չեն պատկառում նրանց հայեացքից, ծանր մեղք են գործում, քանզի Աստծու պատուիրանների դէմ են գործում:

Ուրեմն ի՞նչ պատասխան պիտի տան նրանք, որ ոչ միայն չեն պատուում իրենց ծնողներին, այլեւ անպատուում են անպատկառ կերպով: Ցիրաւի աստուածամարտ են այդպիսիները: Եւ պէտք է իմանալ, որ հօրն ու մօրը վերաբերող այս պատուիրանով պիտի հասկանանք ոչ միայն մեր մարմնական ծնողներին, այլեւ նրանց, ովքեր սնուցում են մեզ հոգեւոր խօսքով ու վարդապետութեամբ: Պիտի հասկանանք նաեւ հմտութիւններ ուսուցանողներին, տարիքով ծերերին եւ բոլոր նրանց, որոնց իւրաքանչիւրին իրենց արժանաւորութեան համապատասխան պարտաւոր ենք պատուել:

Հինգերորդ պատուիրանը զգուշացնում է ընկերոջ հանդէպ անիրաւութիւն չգործել՝ սպանելով նրան, քանզի որեւէ մէկը մահուան եւ կեանքի իշխանութիւն չունի. Աստուած ասում է՝ «Ես սպանում եմ եւ ես փրկում» (Բ. Օրինաց 32:39), ուստի գրուած է. «Ով մարդու արիւն

թափի, իր արիւնը դրա փոխարէն կը թափուի» (Ծննդոց, 9:6):

Այս պատուիրանը ոչ միայն մարդասպանութիւն գործելն է արգելում, այլեւ հարուածելը, վիրաւորելը, ընկերոջը ծաղրելը: Ինչպէս ասում է իմաստուն մէկը, ամէն ծաղրաբան մարդ պիղծ է Տիրոջ առաջ: Եւ Քրիստոս ասում է՝ ով իր եղբօրը ասի յիմար, պարտական կը լինի գեհենի (Մատթ. 5:22): Մեծ զգուշութիւն պիտի ցուցաբերենք այս հարցում, քանզի ինչպէս Յովհաննէս Աւետանիչն է ասում. «Ով ատում է իր եղբօրը, մարդասպան է» (Յովհ. 3:15):

Վեցերորդ պատուիրանը հրամայում է հեռու մնալ պղծութիւններից, վաւաշոտ ու բղջախոհ ազդեցութիւններից: Այսինքն՝ հեռու մնալ այն ամէնից, ինչը որ մարդուն չի մերձեցնում ու շաղկապում եկեղեցու խորհուրդներին, որպէսզի չլինի թէ եկեղեցու խորհուրդները ապականուեն: Այս պատուիրանը նաեւ կանխում է վաւաշոտ ու անկարգ մտքերից, բղջախոհ ու զազիր խօսակ-

ցութիւններից, անամօթ ու լկտի քայլերից, տոփանքով լի անկարգ հայեացքներ նետելուց: Ուրեմն, երբ տղամարդն այդպիսի ցանկալի աչքով է նայում կնոջը, արդէն շնանում է իր սրտում:

Եօթերորդ պատուիրանը զգուշացնում ու կանխում է մեզ գողութիւն անելուց, յափշտակելուց, առանց այլոց գիտութեան ու համաձայնութեան նրանց ունեցուածքը տնօրինելուց: Արգելում է նաեւ ամէն խաբէութիւնից ու անիրաւութիւնից, որ կարող է լինել առեւտրի մէջ, ամէն տեսակի վնասից, որ ուղղուած է ընկերոջ դէմ, օրինակ՝ երբ պարտքը չես հատուցում, երբ թաքցնում ես կորած իրն ու չես վերադարձնում տիրոջը եւ նման այլ բաներ:

Գողութիւնը կարող է թոյլատրելի լինել միայն երկու դէպքում: Նախ, որ արւում է զգուշաւորութիւնից դրդուած, օրինակ՝ երբ մէկը գողանում է մոլեգնած մարդու սուրը, որպէսզի իրեն կամ ուրիշին վնաս չտայ: Երկրորդ, որ արւում է

ստիպուած, երբ օրինակ՝ քաղցած ու մերձիմահ մէկը ուրիշից հաց է գողանում, որպէսզի սովից չմեռնի, քանզի կարիքի ժամանակ ամէն ինչ ընդհանուր է:

Ութերորդ պատուիրանը ուսուցանում է հեռու մնալ ամէն տեսակի ստութիւնից, այսինքն արգելում է սուտը, որ արւում է ընկերոջ համար, ընկերոջ օգուտի համար, նաեւ այն սուտը, որ ոչ օգուտ է եւ ոչ էլ վնաս, այլ պարզապէս արւում է որպէս կատակ եւ ունայնախօսութիւն: Նաեւ արգելում է սուտ վկայութիւն տալը, չարախօսելը, բամբասելը, մէկի անունը անուանարկելը, ընկերոջ յայտնի կամ ծածուկ պակասութիւնը դիտաւորութեամբ յիշատակելը եւ այսպիսի այլ արարքներ, որոնցով վնասում է ընկերոջը: Արգելում է նաեւ ընկերոջ բարիքի մասին լռելը առանց օրինաւոր պատճառի:

Իններորդ պատուիրանը ուսուցանում է Տէր Աստծու համար սուտ երդում չտալ: Բայց ճիշտ երդում տալը եւս արգելեց Քրիստոս՝ պատուի-

րելով ամենեւի՛ն չերդուել (Մատթ. 5:34-35), քանզի ճշմարիտ երդուելու մեր ճիգով երբեմն կեղծն էլ նրա հետ խառնած կը լինենք, որից բազում զրկանքներ ու խարդախութիւններ են առաջ գալիս: Եւ նաեւ՝ Քրիստոս արգելեց մեզ երդուել, որպէսզի երդումի վրայ յոյս դնելով՝ չհեռանանք ճշմարտախօսութիւնից, որ աւելի վեր է, քան երդումը: Քանզի ճշմարտախօս մարդու մէկ խօսքն առաւել վստահելի է, քան ստախօս մարդու երդումները: Դրանից է, որ ճշմարտախօս մարդը ստիպելով անգամ չի երդուի:

Տասներորդ պատուիրանը ուսուցանում է, նախ՝ ընկերոջ կնոջը բղջախոհ մտքով չցանկանալ, որից սովորում ենք հրաժարուել բոլոր տեսակի անպատեհ ցանկութիւններից: Քանզի Աստուած կամենում է, որ ոչ միայն մեր գործերով, այլեւ առաւելաբար սրտո՛վ անբիծ լինենք, որի համար կանխեց մեզ ոչ միայն մեղսական գործեր անելուց, այլեւ ցանկութիւնից, որ սրտում է

ծնւում: Այս ցանկասիրութիւնը երեք տեսակ ունի:

Առաջինը միայն **խորհուրդն** է, որ ասւում է փորձութիւն կամ պատերազմ, երբ սատանան գցում է մեր սիրտը, եւ դեռ չենք ցանկանում կամ հաճոյք ստանում:

Երկրորդն ասւում է **հեշտութիւն**, որ մի փոքր ցանկանալն է այդ չար խորհուրդն ու նրանով հեշտանալը:

Երրորդն ասւում է **հաւանութիւն**, որ ոչ միայն հեշտանալն է, այլեւ նոյնը գիտակցաբար գործելու հաւանութիւնն ու ձգտումը:

Առաջինը մեղք չէ, այլ դիւական պատերազմ, որին եթէ մէկը դիմադրի եւ չհամաձայնի, յաղթութեան պսակ կը ստանայ Տիրոջից: Իսկ երկրորդն ու երրորդը մեղք են, քանզի ընդունում են չարի սերմերը: Պէտք է հեռու մնանք ցանկանալուց, քանզի ասելով մի՛ ցանկացիր, ուզում է ասել՝ մի՛ հաւանիր:

Այսքանը՝ Աստծու պատուիրանների մասին: Բայց արդ, Աստծու պատուիրաններից յետոյ կան նաեւ եկեղեցու պատգամներ, որոնք պարտաւո՛ր է պահպանել ամէն մի քրիստոնեայ, ինչպէս օրինակ՝ Կիրակի եւ տօն օրերին պատարագ ունկնդրել, պահք եւ անհրաժեշտաբար նաեւ ծոմ պահել, մեղք գործելուց յետոյ անմիջապէս խոստովանել, տարուայ մէջ հինգ անգամ ու նաեւ անհրաժեշտ այլ առիթներով հաղորդութիւն ստանալ: Պէտք է պահպանել սրանց նման նաեւ այլ կանոններ, որոնք սահմանել է Սուրբ Եկեղեցին:

Եթէ պարծենում ես, որ սիրում ես քո Տէր Աստծուն,

Ուրեմն պիտի պահես նրա պատուիրանները:

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առաքինութիւնը մտքի բարի ունակութիւնն է, որն ընդունելով՝ հոգին բարեգործ է դառնում:

Հոգու առաքինութիւնները եօթն են՝

հաւատ,

յոյս,

սէր,

խոհեմութիւն,

արիութիւն,

ողջախոհութիւն,

արդարութիւն:

Առաջին երեքը (հաւատ, յոյս, սէր) համարում են աստուածային առաքինութիւններ, քանզի Աստծուն են առնչւում:

Հաւատով ճանաչում եւ հաւատում ենք Աստծուն՝ մեր ստեղծողին, նաեւ հաւատում ենք այն ամէնին, ինչը որ ուսուցանում է սուրբ եկեղեցին:

Յոյսով ակնկալում են Աստծուց ընդունել ամենայն բարիքներ եւ ակնկալում ենք Նրա ողորմութիւնը: Յոյս ենք տածում, որ Աստուած կամենում է մեզ տալ իր արքայութիւնը, որի համար ստեղծել է մեզ:

Սիրով նշուած երեքի մէջ առաջնայինը ***սէրն*** է, որով սիրում ենք Աստծուն ամէն ինչից վեր, սիրում ենք իր բարերարութեան համար եւ փափագում ենք, որ ամենուր կը ճանաչուի նրա զօրութիւնն ու մեծութիւնը:

Իսկ միւս չորսը կոչում ենք մարդկային առաքինութիւններ, որոնց շնորհիւ մարդն ուղղւում է՝ սատանայի դէմ զօրաւոր մնալու համար:

Քանզի ***խոհեմութեամբ*** մարդ բարու եւ չարի ընտրութիւն է անում, չի խաբում որեւէ մէկին ու չի խաբւում ուրիշի կողմից:

Արիութեամբ հաստատուն է մնում ընդդէմ աշխարհի փորձութիւնների եւ դժուարին գործեր է ձեռնարկում յանուն հանդերձեալ բարիքների:

Ողջախոհութեամբ վանում է իրենից ամէն տեսակի հեշտութիւն ու մարմնական ախտի հանդէպ ցանկութիւն:

Եւ ***արդարութեամբ*** պահպանում է հասարակութեան օգուտը, իւրաքանչիւրին հատուցում է ըստ արժանւոյն:

Թէ սրանցով դու զարդարուես,
Կատարեալ մարդ միշտ կը լինես:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԵՕԹԸ
ՊԱՐԳԵՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարդու համար դժուար է ինքն իրենով ուղղուել՝ մեղքերից սրբուելու համար, որի համար Աստուած նրան օգնութիւն տուեց սուրբ հոգու եօթը պարգեւները:

Եւ այդ պարգեւներն են՝

իմաստութիւն,

հանճար,

խորհուրդ,

զօրութիւն,

գիտութիւն,

երկիւղ,

աստուածպաշտութիւն:

Իմաստութեամբ հոգին ճանաչում է Աստծու ծայրագոյն բարութիւնը:

Հանճարով մարդը ճանաչում է իր փրկութիւնը:

Խորհուրդով լուսաւորւում է միշտ՝ երկրային արարարածների հետ չխառնուելու համար:

Զօրութեամբ կարողանում է ընդդիմանալ աշխարհի վշտերին:

Գիտութեամբ ճանաչում է այն, ինչը որ հաւատքն է ուսուցանում:

Երկիւղով փախչում է չարից, որպէսզի չկորցնի ստացուած բարիքը:

Աստուածպաշտութեամբ միշտ խոկում է՝ պահպանելու Աստծու պատուիրանները:

Քեզ օգնութիւն որպէս բարիք,
Ա՛ռ պարգեւները սուրբ հոգու:

ԻՆԸ ԵՐԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աւետարանի «երանի»-ները հետեւեալն են.

Երանի՛ հոգով աղքատներին,

Երանի՛ սգաւորներին,

Երանի՛ հեզերին,

Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարաւն ունեն արդարութեան,

Երանի՛ ողորմածներին,

Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են,

Երանի՛ խաղաղարարներին,

Երանի՛ նրանց, որ հալածւում են արդարութեան համար,

Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն եւ իմ պատճառով ձեր մասին ամէն տեսակ չար խօսք, սուտ ասեն: (*Մատթ. 5.3–12, Ղուկաս 6.20–23)*

Այս երանութիւններից սովորում ենք.

Հրաժարուել սիրոյ հեշտալի կենցաղավարումից, որ հոգու աղքատութիւն է *(Երանի՛ հոգով աղքատներին)*:

Սգալ մշտապէս մեր եւ այլոց գործած մեղքերի համար *(Երանի՛ սգաւորներին):*

Ատել մեր եսական կամքը եւ հնազանդ լինել մեծագոյնին հեզ ընթացքով *(Երանի՛ հեզերին):*

Քաղց ու ծարաւ ունենալ արդարութեան, այսինքն՝ մշտապէս սաստիկ տենչ ունենալ արդարութեան *(Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարաւն ունեն արդարութեան):*

Ողորմած լինել կարօտեալների հանդէպ եւ երկրային ինչքերով գնել երկնային բարիք *(Երանի՛ ողորմածներին):*

Մեր միտքը մաքրել մեղքերից եւ ներքին հայեացքը միշտ յառել Աստծու տեսութեանը *(Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են):*

Ջանալ խաղաղացնել նախ մեր հոգու ու մարմնի խռովքը, ապա եւ մեր եղբայրների խռովքը *(Երանի՛ խաղաղարարներին):*

Յանուն արդարութեան հալածանք յանձն առնել *(Երանի՛ նրանց, որ հալածւում են արդարութեան համար):*

Համբերել նախատինքին եւ խիստ խօսքերին ու զրպարտութիւններին Քրիստոսի անուան համար *(Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն...):*

Եւ այս ամէնը կատարելով՝ երանութեան արժանի կը լինենք, որ լիութի՛ւնն է ամենայն բարիքների:

Այս ամէնը թէ կատարես,

Երանիներ կը վայելես:

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկեղեցու խորհուրդները եօթն են՝

մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն, ապաշխարութիւն, կարգ ձեռնադրութեան,պսակ, վերջին օծում:

Այս խորհուրդները հնարք են մեղքերի դէմ, քանզի՝

- **մկրտութիւնն** ազատում է մեզ սկզբնական մեղքից,

- **դրոշմը** հաստատում է հաւատքի մէջ եւ կնքում՝ ճանաչուելու որպէս Քրիստոսի զինուոր,

- **հաղորդութիւնը** յաւիտենական կեանք է տալիս,

- **ապաշխարութիւնը** վերստին մեզ է վերադարձնում կորսուած շնորհները,

- **ձեռնադրութեամբ** քահանայութեանը տըրւում է սուրբ պատարագ մատուցելու, ժողովրդին բաշխելու եւ միւս խորհուրդները կատարելու զօրութիւն,

- **պսակը** վերացնում է շնութիւնը եւ հաստատում է ամուսնութիւն, քանզի երբ պսակ չկայ այր ու կնոջ միջեւ, նրանց զուգաւորումը շնութիւն է,

- **վերջին օծումը** ազատում է մեզ բազմազան ու փոշետեսակ, երբեմն մոռացուած մեղքերից եւ զօրացնում է ընդդէմ սատանայի՝ հոգին աւանդելիս:

Բայց պէտք է իմանալ, որ հայոց եկեղեցին դրոշմն ու վերջին օծումը միասին է կատարում մկրտութեան պահին: Պատճառն այն է, որ ինչպէս մկրտութեան հետ մէկտեղ տրւում է հաղորդութեան խորհուրդը, որ յանկարծ որեւէ մէկը մահանալով զրկուած չմնայ սուրբ խորհրդի ճաշակումից, այդպէս եւ տրւում է վերջին օծումը, որ

յանկարծ մէկը մահանալով զրկուած չմնայ այդ խորհրդից:

Քանզի **աւելի ճիշտ է միշտ պատրաստ պահած ունենալ սուրը, քան թէ սպասել մինչեւ թշնամու գալու պահը, որ չլինի թէ յանկարծ թշնամին գայ, եւ ի վիճակի չլինես փութով սուրը ձեռքդ առնելու**: Քանզի ինչպէս ասւում է՝ «Տիրոջ օրը գողի պէս պիտի գայ» (Բ Պետր. 3:10), ու նաեւ՝ «Յանկարծակի ձեզ վրայ կը հասնի այն օրը» (Ղուկ. 21:34): Կամ թէ՝ «չգիտէք օրը եւ ժամը» (Մատթ. 25-13): Իրօք որ չգիտենք, թէ այս պահից յետոյ ինչ է լինելու մեզ հետ:

Իմաստութեամբ շինի՛ր ամուր տուն,
Եւ կը կանգնեցնես այնտեղ եօթը ընտիր սիւն:

ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ

Մեղքը աստուածային պատուիրանների հանդէպ անհնազանդութիւնն է: Մեղք ենք գործում այն ժամանակ, երբ հեռանում ենք այն ամէնից, ինչ հրամայում է Աստուած, եւ գործում ենք այն, ինչ չի կամենում ու հրամայում Աստուած:

Մեղքը լինում է երկու տեսակի՝ **սկզբնական** եւ **ներգործական**: Սկզբնականն այն է, որ մեր նախահօրից մեզ փոխանցուեց, երբ չպահպանուեց Աստծու սահմանած պատուիրանը: Դրա համար այս մեղքը ընդհանուր է, քանզի միապէս տարածւում է ամենքի վրայ, որից ազատւում ենք աւազանի սուրբ մկրտութեամբ եւ սուրբ հոգու շնորհներով:

Իսկ ներգործական մեղքն այն է, որ իւրաքանչիւր ոք գործում է անձամբ, ուստի այս մեղքը չի տարածւում բոլորի վրայ հաւասարապէս, այլ միայն նրա վրայ, ով մեղանչել է, որից մաքրւում ենք զղջումով եւ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ:

Արդ, ինչպէս որ սկզբնական մեղքը մի անգամ եղաւ, որ Ադամի յանցանքն էր, այդպէս էլ մկրտութիւնը, որ դրա դեղն է, մէկ անգամ է լինում եւ չի կրկնւում: Ու քանի որ ներգործական մեղքը բազմիցս է լինում, քանզի բազմիցս սխալներ ենք գործում, այդպէս էլ ապաշխարութիւնը, որ նրա դեղն է, բազում անգամ կատարել հաստատուեց Քրիստոսի կողմից: Հակառակ դէպքում ո՞վ կարող կը լինէր փրկուելու:

Ներգործական մեղքը երեք տեսակի է լինում՝ **մահացու, ներելի** եւ **փոշետեսակ**:

Մահացուն, որ խիստ հակառակ է Աստծուն, այն է, երբ գործւում է լիովին գիտակցելով:

Ներելին այն է, որ Աստծուն խիստ հակառակ չէ եւ գործւում է ոչ կատարեալ գիտակցութեամբ:

Իսկ փոշետեսակն այն է, որը չենք կարող ճանաչել, թէ մեղանչել ենք, նաեւ այն է, որ գործելուց յետոյ մոռանում ենք եւ չենք կարող մտաբերել ու խոստովանել:

Մեղքի գլխաւոր պատճառները եօթն են՝ **հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն, բոչախոհութիւն**, որոնք կոչւում են մահացու, քանզի մեռցնում ու սպանում են հոգին:

Հպարտութիւնն այն է, երբ կամենում կամ ձգտում ենք լինել ամենքից մեծ, երբ չենք հաւանում որեւէ մէկին կամ չենք կամենում որեւէ մէկին մեզանից վեր կամ անգամ հաւասար տեսնել:

Նախանձը ընկերոջ բարիքի վրայ տխրելն ու ցաւելն է, եղբօր բարիքը իր համար պակասութիւն համարելը:

Բարկութիւնը ցասումով լի անկարգ շարժումն է ընկերոջ դէմ՝ նրան պատժել կամենալով:

Ծուլութիւնը բարի գործերի հանդէպ անհոգութիւնն է, այսինքն՝ առաքինի գործերի մէջ թերանալը:

Ագահութիւնը ամէն ինչ անհոգ կերպով ցանկանալն է, իր ունեցածը բաւարար չհամարելը, միշտ ընկերոջ ինչքը իւրացնել կամենալը, առաւելապէս մարմնական կարիքների եւ ոչ թէ երկնքի արքայութեան մասին հոգալը:

Որկրամոլութիւնը անկարգ ուտելն ու ըմպելն է, դրան որեւէ բնական սահման չդնելը, դա այն է, երբ ուզում ես ամէն կերակուր լայն կոկորդից ներս կլանել:

Բղջախոհութիւնը սրտի ու մարմնի անկարգ ներգործութիւնն է ախտաբորբոք հեշտասիրութեամբ:

Եւ այս մոլութիւնները ծնւում են մէկը միւսից, հետեւեալ կերպ:

Հպարտը կամենում է լինել ամենքից մեծը, եւ երբ տեսնում է մէկին իրեն հաւասար, ցաւում ու մորմոքում է սրտում, որից ծնւում է նախանձը:

Նախանձոտ մարդու նեղսրտութիւնից ծնւում է բարկութիւնը:

Բարկացող մարդը, երբ չի կարողանում վրէժ լուծել, տրտմում է, լքուած զգում, որից ծնւում է ծուլութիւնը:

Ծոյլը փորձում է իր տրտմութեան համար մխիթարութիւն գտնել, որից ծնւում է ագահութիւնը:

Ագահը, երկրաւոր բաներով յղփանալով, տրւում է որկրամոլութեան:

Իսկ որկրամոլը, իր որովայնով տարուելով, բորբոքում է բղջախոհութիւն:

Եւ այդպէս մէկը միւսից ծլարձակում են չարիքի բոլոր եօթը արմատները, այն հերթականութեամբ, ինչպէս որ գրեցինք:

Այսպիսով՝ ահա եօթը արմատներն ու սկզբնապատճառները մեղքերի, որոնցից արտա-

մղում ու զարգանում են բոլոր մեղքերը: Օրինակ՝ հպարտութիւնից ծնւում են ինքնահաւանութիւնը, փառասիրութիւնը, անհնազանդութիւնը եւ սրանց նման այլ բաներ, նախանձից՝ բամբասանքը, ատելութիւնը, տրտմելը ընկերոջ բարիքի համար եւ այլն, բարկութիւնից՝ փքուելը, կռիւը, հայհոյանքը եւ այլն, ծուլութիւնից՝ տրտմութիւնը, թմրութիւնը, յուսահատութիւնը եւ այլն, ագահութիւնից՝ ստութիւնը, գողութիւնը, զրկողութիւնը եւ այլն, որկրամոլութիւնից՝ անյագութիւնը, արբեցողութիւնը, անպարկեշտ ուրախանալը եւ այլն: Եւ դեռ միայն այս թուարկուածները չեն, կան զանազան եւ բազում այլ մեղքեր: Եւ դրանցից թող փրկի մեր Տէր Աստուած բոլոր իրեն հաւատացողներին, ամէն:

Եօթը արմատն այս չարիքների
Մի՛ թողէք որ պտղաբերի:

Արդ, հպարտութեան դեղը խոնարհութիւնն է, որ ինքն իրեն ամէն բարիքի անարժան է համարում, մտքում միշտ Աստծու երկիւղն է կրում:

Նախանձի դեղը եղբայրասիրութիւնն է, ընկերոջը բարի կամենալն ու սրտակից լինելը:

Բարկութեան դեղը հեզութիւնն է, համբերութիւնը եւ հարցի վերջն ըմբռնելը:

Ծուլութեան դեղը արիութիւնն է, ջերմեռանդութիւնը եւ առ Աստուած յոյս ունենալը:

Ագահութեան դեղը հիւրասիրութիւնն է, ողորմածութիւնը եւ մահուան մասին միշտ խորհելը:

Որկրամոլութեան դեղը ժուժկալութիւնն է, պահեցողութիւնն ու պարկեշտութիւնը ուտելիս ու ըմպելիս:

Բղջախոհութեան դեղը ծոմապահութիւնն է եւ մարմնական հեշտութիւնն արհամարհելը:

Թէ մեղքերիդ դեղ չանես,
Կեանքի հունից կը զրկուես:

Նաեւ պէտք է իմանալ, որ հպարտութիւնը համեմատւում է առիւծի հետ, նախանձը՝ շան, բարկութիւնը՝ գայլի, ծուլութիւնը՝ էշի, ագահութիւնը՝ ոզնու, որկրամոլութիւնը՝ արջի, բղջախոհութիւնը՝ խոզի հետ:

Եւ մարդն էլ բանական լինելով՝ պատրաւոր է հեռու մնալ նման անբաններից եւ միշտ Աստծու պատկեր հանդիսանալ:

Թէ մեղքերի մէջ մոլորուես,
Անբաններին կը նմանես:

Դարձեալ պէտք է իմանալ, որ ինչպէս ոչխար մորթելիս եօթը օրգան դեն են նետում, եւ նոր միայն ուտելի է լինում, այնպէս էլ մենք, եթէ մեզանից չնետենք եօթը մեղքերի մոլութիւնները, չենք կարող Աստծուն հաճոյ լինել: Դրանք են՝ եղջիւրը, որ մեր միջի հպարտութիւնն է, լեղին, որ նախանձն է, արիւնը, որ բարկութիւնն է, կճղակ-

ները, որ ծուլութիւնն են, ոսկորը, որ ագահութիւնն է, փորոտիքը, որ որկրամոլութիւնն է, մորթին, որ բղջախոհութիւնն է:

Չարը նետի՛ր քեզնից հեռու,
Որ Աստծուն լինես հաճոյ:

Սուրբ հոգու դէմ գործած մեղքերը հետեւեալն են՝ ինքնահաճութիւնը, կամապաշտութիւնը, ճշմարտութեանն ընդդիմանալը, ընկերոջ շնորհներին նախանձելը, մեղքերը չզղջալը եւ յաւիտենական կեանքի հանդէպ անյուսութիւնը: Սրանք սուրբ հոգու դէմ են մեղք համարւում, քանզի սուրբ հոգու պարգեւները սրանցով ունայն են համարւում:

Մեղքերը, որոնք աղաղակում են առ Աստուած, սրանք են. անմեղին ինքնակամ սպանելը, սոդոմական մեղքը, աղքատներին զրկելը, մշակների վարձը չտալը:

Այս չորսը սարսափելի անօրինութիւններ են:

Դրանք մարդկանց մղում են Աստծու հանդէպ մեղքերի, ահեղ մահուան, անվախճան դատաստանի, գեհանական հուրի եւ հետ են պահում յաւիտենական կեանքի վայելչութիւնից:

Այս մեղքերը թէ ըմբռնես,
Գուցէ երբէք չմեղանչես:

Պէտք է իմանալ, որ մարդը երեք կերպով է մեղանչում՝ **խորհրդով** (Աստծու սրտով), **խօսքով** (Աստծու բերանով), **գործով** (Աստծու զգայարաններով):

Սրտի մեղքերը սրանք են՝ չարը ցանկանալը, չարից հրճուելը, թիւր դատելը, անհաւատ ու ոչ ջերմեռանդ լինելը, յանդգնութիւնը, անգթութիւնը, ատելութիւնը, նախանձը, բարկութիւնը, չարչարող սէրը, յուսահատութիւնը, ագահութիւնը, չարութեան մէջ յամառ լինելը, բարուց ձանձրանալը, մարդկանց հաճոյական լինելու հանդէպ

սերը, բարի գործերի կամ աղքատ բարեկամի համար ամաչելը եւ նման այդպիսիք:

Բերանի մեղքերն են՝ յաճախ երդուելը, սուտ երդուելը, սուտ խօսելը, սուտ վկայելը, մատնելը, հայհոյելը, բամբասելը, նախատելը, անիծելը, սպառնալը, վատահամբաւելը, շողոքորթելը, պարծենալը, չարին գովք անելը, դատարկաբանելը, շատախօսելը, չար խրատ տալը, տարաձայնութիւն սերմանելը, բանի իմաստն ընկալելու փոխարէն աստուածային երգեցողութեան մէջ ձայնին աւելորդ պաճուճանք հաղորդելը եւ նման այդպիսիք:

Գործի մեղքերն են՝ որկամոլութիւնը, արբեցողութիւնը, բղջախոհութիւնը, կախարդութիւնը, ցոփ վարքը, հարուածելը, գողանալը, յափշտակելը, վաշխառութիւնը, խաբէութիւնը, մեղանչական խաղեր խաղալը, կատակերգուներին պատիւ տալը, անհրաժեշտ հարցերում խնայելը, պարելիս ծեքծեքելը, փոքրաւորներին նեղելը, մեղանչելը լսելով, նայելով, ճաշակելով, հոտո-

տելով, շօշափելով, ձեռքը գցելով, համբուրելով, ընծայելով, ակնարկութեամբ, պատգամով, թղթագրութեամբ եւ նման այդպիսիք:

Այս մեղքերից թէ մաքրուես,
Եռանձնեայ լոյս կ’ընկալես:

Ջանցառութեան մեղքերը սրանք են՝ Աստծու մասին չխորհելը, մտքում մշտապէս Աստծու երկիւղը չունենալը, Աստծուն գերագոյն սիրով չսիրելը, Նրա երախտիքից չգոհանալը, մեղք գործելիս չցաւելը, Աստծու շնորհներն ընդունելու համար չնախապատրաստուելը, ստացուած շնորհները չգործածելը, ասուած աղօթքներին հետամուտ չլինելը, զանց առնելը այն աղօթքները, որ պարտաւոր ենք ասել, խոստովանութեան կամ հաղորդութեան մէջ ծուլանալը, ծնողներին չպատուելը, խղճմտանքով չքննելը, եկեղեցուց կամ քարոզից խուսափելը, փորձութիւններին չդիմադրելը, յանձն առած ապաշխարանքը չկա-

տարելը կամ ծուլութեամբ կատարելը, ընկերոջ բարիքին ընկերակից չլինելը, նրա վշտին չկարեկցելը, մեղսաւոր մարդուն յանդիմանելը սիրով, տգէտներին չուսուցանելը, նեղեալներին չմխիթարելը, վէճ ու կռիւը չխաղաղեցնելը, խրատներին ունկնդիր չլինելը, ամէն ինչին Տիրոջով հոգ չտանելը, բոլոր գործերը Աստծուն չվերագրելը եւ նման այլ բաներ:

Այս ամէնը թէ զանց առնես,
Ոչ թէ արթուն, այլ ննջեալ ես:

Եւ ուրեմն, ինչպէս որ չարի մասին խորհում ենք սրտով, խօսում ենք բերանով եւ կատարում ենք գործով, այնպէս էլ պարտաւոր ենք զղջալ սրտով, խոստովանել բերանով եւ ապաշխարել գործով, որպէսզի թողութեան արժանանանք:

Զղջումը լինում է 3 կերպ՝ **ծառայական, վարձկանական** եւ **որդիական**:

Ծառայական զղջումն այն է, երբ զղջում ենք մեղքի համար դժոխքի ահից, ինչպէս որ ծառան է տրտմում մեղք գործելիս, թէ պատժի է արժանանալու իր տիրոջ կողմից:

Վարձկանական զղջումն այն է, երբ զղջում ենք երկնային արքայութեան փառքի համար, ինչպէս որ վարձկանն է ափսոսում, թէ չլինի՞ կորցնեմ իմ վարձը:

Որդիական զղջումն այն է, երբ զղջում ենք յանուն Աստծու յատուկ սիրոյ, ինչպէս որ որդին է տխրում, թէ չլինի՞ տրտմեցնեմ իմ ծնողներին: Սա առաւել պատուական զղջումն է, քան առաջին երկուսը, քանզի առաջին երկուսը անձի օգուտին են վերաբերում, իսկ սա՝ յատկապէս Աստծու սիրուն: Այդ պատճառով յոյժ ընդունելի է Աստծուն այսպիսի զղջումը, քանի որ այն ո՛չ թէ դժոխքի ահից կամ արքայութեան վայելքի համար է լինում, այլ անկախ դժոխքի կամ արքայութեան լինել-չլինելուց՝ Աստծու հանդէպ ունեցած յատուկ սիրուց դրդուած է զղջում.

զղջում է, որ մեղք գործելով հեռացել է Աստծուց, որ գերագոյնն է բոլոր բարիքների մէջ:

Դարձեալ, զղջումը պէտք է ներքուստ լինի, խորը հառաչումով, ինչպէս ասում է մարգարէն՝ «պատռեցէ՛ք ձեր սրտերը եւ ոչ թէ ձեր հագուստները» (Յովել, 2:13): Ու նաեւ՝ «սուգը սիրելի դարձրու քեզ համար»: Պէտք է ցաւ ապրել ոչ թէ ոմանց մեղքի համար միայն, այլ ընդհանրապէ՛ս մեղքի համար:

Զղջումը պիտի լինի նպատակադիր՝ Աստծուն հաստատուն կերպով մտքում ունենալով ու այլեւս չմեղանչելով: Ինչպէս որ պէտք է Աստծուն սիրենք բոլոր սիրելիներից առաւել, այնպէս էլ պէտք է մեղքից գարշենք բոլոր գարշելի բաներից առաւել: Քանզի ի՞նչը կարող է աւելի գարշելի լինել Քրիստոսի համար, քան մեղքը, որ մարդուն ատելի է դարձնում Աստծու համար, փակում է նրա համար արքայութեան դուռը եւ բացում է դժոխքի վիհը, զրկում է յաւիտենական կեանքից, արժանացնում է յաւիտենական տանջանքների,

հանում է ընտրեալների թուից եւ դասակարգում կորստեան որդիների շարքը, սուրբ հոգու տաճարը վերածում է Սադայէլի խորանի, հրեշ-տակներին դարձնում է դեւերին դասակից, հա-նում է լոյսի պատմուճանը եւ խաւարային զգեստներ հագցնում, իջեցնում է փառքի գա-հոյքից եւ գլորում դժոխքի անդունդները. եւ մեղքը այդպէս անհամար այլ վնասներ է պատ-ճառում մարդուն:

Այդպէս ուրեմն, մեղքը բոլոր գարշելի բանե-րից առաւել գարշելի է:

Մեղքն է, որ հանեց Ադամին ու Եւային դրախ-տից եւ ամբողջովին անէծքի տակ գցեց:

Մեղքը հրեշտակներին դեւեր դարձրեց, կռա-պաշտութեան եւ շատ այլ ամբարշտութիւնների պատճառ եղաւ:

Մեղքը մահուան առիթ եղաւ, որին ենթակայ ենք դարձել ամենքս:

Մեղքը անթիւ անձանց իջեցրեց դժոխք եւ տակաւին ամէն օր իջեցնում է նոր մարդկանց:

Խորշի՛ր ուրեմն մեղքից, ո՛վ մեղաւոր մարդ, իսկ եթէ ոչ, ուրեմն անզգամ մէկն ես:

Ջազիր մեղքն է ամէն բանից միշտ խոտելի,
Մարդ դառնում է արարչի մօտ խիստ ատելի:

* * *

Պէտք է իմանալ, որ մեղքերը բարւոք զոչջալու համար նախ պարտաւոր ենք մեր միտքը մանրակրկիտ քննել, ապա գնալ քահանայի մօտ եւ պատմել նրան ամէն բան: Այսինքն՝ մինչ պատրաստւում ենք մեղքի համար զոչջալ, պէտք է մի մեկուսի տեղ առանձնանանք, մեր միտքը ի մի բերենք եւ հեռու վանենք սրտից երկրաւոր ամէն տեսակի զբաղմունք, ծնկի գանք, երկրպագենք Աստծուն եւ ասենք. «Տէ՛ր, առաքի՛ր քո շնորհների լոյսը իմ մեղաւոր անձին, որպէսզի կարենամ լիովին մտաբերել իմ բոլոր յանցանքները եւ գարշել դրանցից քո գերբնական սիրոյ համար»:

Եւ ապա պիտի փորփրենք մեր խղճմտանքը եւ ուշի ուշով խորհենք ինչ ենք գործել՝ թէ՛ սրտով, թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով, քննելով Աստծու տասը պատուիրանների, եկեղեցական այլ պատգամների, եօթը մահացու մեղքերի ու եօթը զգայութիւնների ներքոյ: Եւ երբ Տիրոջ շնորհների միջոցով քննենք եւ ընկալենք բոլոր մեղքերը՝ յիշենք, թէ ինչքա՛ն չարիքների առիթ են եղել մեր իսկ մեղքերը մեզ համար:

Մերկացրե՞լ են հոգեւոր զարդարանքից եւ վերցրել բարիքի արդիւնքները:

Թշնամի ու ատելի՞ են դարձրել Աստծուն, որին սիրելի էիր, եւ վերածել են սիրելի ու բարեկամ սատանայի՞ն, որին ատելի էիր:

Զրկե՞լ են յաւիտենական փառքից ու պարտապան արել մշտնջենական տանջանքների՞:

Խլե՞լ են Աստծուց եւ ընծայել սատանայի՞ն:

Հառաչի՛ր ուրեմն, հոգո՛ց հանիր եւ ամբողջ սրտով ասա՛. «Ո՛վ Տէր իմ եւ Աստուած իմ, նայի՛ր, թէ ինչքա՛ն թշուառ եմ ես, որ այդպիսի աննման

գեղեցկութիւնդ փոխանակեցի գարշելի մեղքի հետ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ անթիւ կրկնութեամբ: Ահա՛ զղջում եմ, Տէ՛ր իմ, բոլոր անօրէնութիւն-ներիս համար, որոնք հեռացրին ինձ իմ ամե-նամեծ արարչից, որ գերբնապէս սիրելի, պատ-ուելի ու պաշտելի է միայն»:

Ուրեմն այդ ամէնից յետոյ աւելի լաւ կը լինի քեզ համար մեռնել, քան թէ կրկին մեղանչել ու կրկին բարկացնել քո արարչին ու հեռանալ նրանից:

Ասա՛ նաեւ ինքդ քեզ. «Ո՛վ անզգամ ու յիմար մարդ, այդ ինչպէ՞ս լքեցիր անփոփոխ ու ան-սահման բարուն եւ սիրեցիր ունայնութիւնը, ճանաչի՛ր քեզ, թէ ի՞նչ թշուառութեան ես հասել, եւ զղջա՛ քո բոլոր անօրէնութիւնները»:

Եւ դարձեալ Տիրոջն ասա. «Տէ՛ր, մի՛ կործա-նիր ինձ իմ անթիւ յանցանքների պատճառով, Տէ՛ր իմ, Տէ՛ր, այլ փրկի՛ր ինձ ըստ քո անսահման ողորմութեան, ամէն»:

Թէ զղջաս քո մեղքերից,

Չես հեռանայ շնորհներից:

Այսպէս բարւոք զղջումից եւ խոստովանութիւնից յետոյ պիտի գնաս քահանայի մօտ, ծնկի գաս նրա առաջ, խաչակնքես երեսդ եւ ասես. «Յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու»: Ապա շարունակես. «Խոստովանում եմ Աստծու եւ Սուրբ Աստուածածնի առաջ եւ բոլոր սուրբերի առաջ, եւ քո առաջ, Հայր սուրբ, բոլոր մեղքերս, որ գործել եմ, քանզի մեղանչեցի խորհրդով, խօսքով եւ գործով, կամովին եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ: Մեղանչեցի Աստծու դէմ»:

Եւ դրանից յետոյ մէկ առ մէկ պիտի թուարկես քո բոլոր մեղքերը՝ ճշմարտութեամբ, ազնուօրէն, կատարելապէս եւ յոյժ խոնարհութեամբ:

Աստուծո՛յ ճշմարտութեամբ, ոչ աւել, ոչ պակաս:

Աստծուն հաւատարմութեամբ, որ պարտադրուած չէ ոչ մէկից:

Կատարելապէս, լիապէս բոլոր մանրամասները Աստծուն ասելու համար:

Եւ յոյժ խոնարհութեամբ՝ Աստծու առաջ անարժան համարելով քեզ բոլոր մարդկանցից:

Եւ ինչ ապաշխարութեան որ մղի քահանան, յօժարութեամբ պիտի յանձն առնես:

Եւ երբ քո մեղքերը յայտնի կերպով խոստովանես, զղջացած սրտով, խոնարհ գլխով համեստ ձայնով ասա. «Հա՛յր սուրբ, քեզ ունեմ հաշտութեան միջնորդ եւ բարեխօս Աստծու միածին Որդու առաջ, որպէսզի իշխանութեամբ, որ տրուած է քեզ, արձակես ինձ իմ մեղքերի կապանքներից, աղաչում եմ քեզ»:

Եւ մինչ քահանան սկսում է արձակումը, խորհի՛ր, թէ Քրիստոս երկնքում նոյնպէս արձակում է քեզ քո կապանքներից: Եւ խոստովանութիւնից յետոյ շտապով գնա՛ դարձեալ քո մեկուսի տեղը եւ Աստծուն գոհութիւն եւ շնորհա-

կալութիւն մատուցիր՝ մեծ խոնարհութեամբ ասելով.

«Գոհանում եմ քեզանից, բազմագութ արարիչ եւ անոխակալ Տէր իմ եւ Աստուած իմ, մեծ է քո ողորմութիւնը ինձ վրայ, քանզի փրկեցիր ինձ իմ ներքին դժոխքից: Մինչ հեռու էի, Քո ձեռքը անհուն ողորմութեամբ տարածեցիր եւ բերեցիր ինձ Քեզ մօտ եւ ազատեցիր կորստեան տանող ընթացքից: Երբ հեղգացած էի, համբերեցիր, եւ երբ դիմեցի քեզ, ընդունեցիր ինձ, եւ այժմ պատռեցիր իմ պարտքերի մուրհակները: Փա՛ռք Քո անհուն ողորմութեանն ու գթութեանը, Տէ՛ր, ի՞նչ կարող եմ տալ Քո անբաւ երախտիքի դիմաց, այլ ընդունի՛ր միայն իմ մեղսաւոր անձի գոհութեան պատարագը, որ ընծայում եմ Քեզ պատկառեալ երեսով: Եւ զօրացրու՛ ինձ, Տէ՛ր, Քո շնորհներով, որպէսզի հետայսու այլեւս չմեղանչեմ եւ նորից չհեռանամ կենդանարար եւ ծայրագոյն լոյսիցդ, ամէն»:

Ասա նաեւ ինքդ քեզ. «Ահաւասիկ առողջացար, ով իմ անձ, այլեւս մի՛ մեղանչիր, որպէսզի չարիքները ինձ կրկին չպատեն»:

Եւ այնուհետեւ սկսիր մեծ յօժարութեամբ կատարել ապաշխարանքը:

Պէտք է իմանալ, որ երեք պատճառ կայ, որոնց համար պիտի կրկնուի խոստովանութիւնը.

ա) եթէ տգէտ էր քահանան եւ չէր զանազանում մահացու եւ ներելի մեղքերը,

բ) եթէ խոստովանողը կամովի եւ գիտակցաբար թաքցրել է որոշ մեղքեր եւ քահանային ոչ բոլորն է ասել,

գ) եթէ անտեսել է դրուած ապաշխարութիւնը եւ չի կատարել այն եւ կամ մոռացութեան մատնել, թէ ինչու է ապաշխարում:

Իսկ եթէ մոռացութեամբ որոշ մեղքեր մնացել են չխոստովանուած եւ յետոյ են մտքին եկել, չպէտք է կրկնել ամբողջ խոստովանութիւնը, այլ միայն այն, որ մոռացուել էր:

Բայց նոյն քահանային եւ ոչ ուրիշ մէկի պէտք է ասել այն, որը մոռացուել էր ասել, որպէս Աստծու առաջ, իսկ եթէ նոյն քահանային չգտնի, թող խոստովանի ուրիշին:

Եւ պէտք է իմանալ, քանի դեռ որեւէ մէկը զղջում է մեղքերից, պէտք է միաժամանակ զղջում ունենայ նաեւ բարիք չգործելու համար, իր ժամանակը ծուլութեամբ եւ ունայնութեամբ կորցնելու համար, մեղաւորին մեղքից յետ չպահելու համար, այլոց բարի օրինակ չլինելու կամ չար օրինակով գայթակղելու համար:

Նաեւ նրա համար, որ կարող էր գործել, եթէ ունակ լինէր:

Նրա համար, որ գործեց ու մոռացաւ:

Նրա համար, որ գործեց ու չգիտակցեց, որ մեղք է:

Նրա համար, որ գործեց՝ այն առաքինութիւն կարծելով:

Նրա համար, որ խառնեց բարի գործերի հետ եւ ընդունայն դարձրեց իր շնորհներն ու վարձը:

Պէտք է մանաւանդ զղջալ մեղքի հանդէպ անհոգ լինելու համար, որ արմատն ու սնուցիչն է բոլոր մոլութիւնների: Եւ այնպիսի խոստովանահայր պիտի ընտրես քեզ համար, որ չլինի չարասէր կամ բարկացող, անողորմ կամ ընչասէր, արբեցող կամ պճնամոլ եւ այլն, քանզի եթէ ինքն է շեղուած ուղիղ ընթացքից, ինչպէ՞ս կարող է խրատել ուրիշներին եւ ուղղութիւն տալ:

Ու նաեւ հերձուածող կամ արդարացիօրէն բանադրուած չպիտի լինի քահանան, քանզի այդպիսին չունի կապելու կամ արձակելու իշխանութիւն: Չպիտի լինի անխորհրդապահ, որից բազմաթիւ շփոթութիւններ ու գայթակղութիւններ են առաջ գալիս: Նաեւ չպիտի լինի տգէտ եւ ուսումնատեաց, որ հոգու կուրութիւն է ու բանականութեան լոյսի խաւարում, քանզի այդպիսիք արժանի չեն քահանայական բարձր աստիճանի: Քանզի ով մերժում է ուսումն ու գիտութիւնը, հենց ինքը մերժուած կը լինի Աստծուց, ինչպէս որ ասում է Աստուած Ովսէի բերանով.

«Դու մերժեցիր իմ գիտութիւնը, ես էլ քեզ կը մերժեմ, որպէսզի քահանայութիւն չանես ինձ համար» (Ովսէ, 4:6): Որի համար Ս. Թադէոս Առաքեալը կանոն հաստատեց՝ ասելով. «Տգէտն ամենեւին եպիսկոպոս թող չձեռնադրուի, իսկ եթէ ձեռնադրուի, նզովք կընդունի եւ չարեաց տգիտութեանը պարտական կը լինի»:

Արդ, ինչպէս **անհմուտ բժիշկը կարող է սպանել մարմնաւոր հիւանդին, այդպէս էլ տգէտ քահանան կարող է սպանել հոգեւոր հիւանդին**: Դրա համար պէտք է մեծ ուշադրութեամբ գիտունին ընտրել՝ նրան հոգեկան վէրքերի մասին յայտնելու համար:

Ահա այսքանը համառօտ՝ որպէս խրատ խոստովանողի համար:

Մեղքերդ միշտ խոստովանի՛ր,

Որ չմատնուես անվերջ հրի:

ԽՐԱՏ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐԵՐԻՆ

Երբ քեզ մօտ իր մեղքերը խոստովանելու գայ մէկը, որին երբեւէ չես լսել կամ որի կենցաղավարութեանը ծանօթ չես, նախ հարցրու, թէ երբեւէ խոստովանել է, թէ ոչ: Եթէ ասի՝ այո, հարցրու, թէ ե՛րբ է խոստովանել, եւ եթէ ասի՝ վաղուց, հարցրու, թէ կարո՞ղ է իր խոստովանած մեղքերը զանազանել դեռեւս չխոստովանածից, եւ եթէ ասի՝ չեմ կարող, քանզի մոռացել եմ, թելադրիր մտաբերել ընդհանրապէս իր բոլոր մեղքերը, փոքր տարիքից ի վեր, որքան որ կկարողանայ:

Եւ քանի դեռ խոստովանում է, զգուշութեամբ մէկ առ մէկ մտապահիր ողջ խոստովանածը, որպէսզի կարողանաս սպեղանի դնել նրա խոցոտուած տեղերին: Իսկ եթէ ասածների որոշ

մասը մոռանաս, մի՛ շրջանցիր, այլ հարցրո՛ւ կրկին, վերստին տեղեկացիր, թէ ի՞նչ էր ասել, քանզի պէտք է բոլոր վէրքերը բժշկել, որպէսզի չլինի թէ մի մասը անբոյժ մնայ ու դարձեալ սպանի նրա հոգին:

Եւ երբ խոստովանի իր մեղքերը, զգուշութեամբ ճշտիր այն հանգամանքները, որ ծանրացնում կամ թեթեւացնում են մեղքերը: Այսինքն՝ *ո՞վ, ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, որո՞վ, ինչպէ՞ս, քանի՞ անգամ, ի՞նչ պատճառով,* հետեւեալ կերպ:

Ո՞վ - այսինքն՝ Աստծու ա՞յր է մեղք գործողը, թէ՞ կին, մատղա՞շ է, թէ՞ ծեր, ազնուակա՞ն, թէ՞ ռամիկ, ազա՞տ, թէ՞ ծառայ, գիտու՞ն, թէ՞ տգէտ, աղքա՞տ, թէ՞ հարուստ, ամուսնացեա՞լ, թէ՞ ազապ, կրօնաւո՞ր, թէ՞ աշխարհական եւ այլն:

Ի՞նչ - այսինքն՝ անառակութի՞ւն է արել, թէ՞ շնութիւն, գողութի՞ւն, թէ՞ սպանութիւն, նախատի՞նք, թէ՞ հայհոյանք, նո՞ր է մեղքը, թէ՞ հին եւ այլն:

Որտե՞ղ - այսինքն՝ սուրբ վայրո՞ւմ է մեղանչել, թէ՞ սովորական տեղում, տա՞նը, թէ՞ եկեղեցում եւ այլն:

Ե՞րբ - այսինքն՝ Աստծու տօն օրերի՞ն, թէ՞ այլ օր է մեղք գործել, պահքի՞ն, թէ՞ ուտիք օրերին, քառասնօրեա՞յ, թէ՞ այլ պահքի օրերին, վաղու՞ց, թէ՞ նոր օրերում եւ այլն:

Որո՞վ - այսինքն՝ միջնորդաւորուա՞ծ է գործել, թէ՞ առանց միջնորդի, միջնորդը տեղեա՞կ է եղել այդ գործի մասին, թէ՞ նոր իմացել, քանզի նոյն մեղքին պարտական է նաեւ նա, ո՞ւմ հետ է մեղանչել եւ այլն:

Ինչպէ՞ս - Աստծուն յայտնի՞, թէ՞ ծածուկ կերպով է արուել, կամովի՞ն, թէ՞ ակամայ, կամքի թուլութեա՞մբ, թէ՞ մարմնի հեշտանքով, ի՞նքն է դրդել, թէ՞ մէկ ուրիշից է դրդուել եւ այլն:

Քանի՞ անգամ - այսինքն՝ քանի՞ անգամ է մեղքը գործել կամ որքա՞ն ժամանակ, նոյն անձի՞, թէ՞ շատերի հետ եւ այլն:

Ի՞նչ պատճառով - այսինքն՝ ագահութիւնից դրդուա՞ծ է գողացել, թէ՞ աղքատութեան բերումով, սպանելու համա՞ր է հարուածել, թէ՞ վախեցնելու, որպէս կատակ տնա՞զ է արել, թէ՞ սրտի չարութեամբ ծաղրել է, ունեցուածքի՞ց է հպարտացել, թէ՞ առաքինութիւնից, բարի դիտաւորութեա՞մբ է բարկացել, թէ՞ սրտմտութեան ախտով եւ սրանց նման այլ բաներ:

Ապա պիտի սիրով յորդորես քեզ խոստովանողին, որպէսզի չթաքցնի որեւէ բան մեղքերից, ուստի պիտի ասես նրան. «Որդեա՛կ, եթէ մեղքդ թաքցնես, խոստովանութիւնդ օգուտ չի լինի քեզ համար, եւ մեղքերից չես արձակուի»:

Նաեւ գիտցիր, որ երբեւէ չպէտք է արհամարհես խոստովանողին խօսքով կամ որեւէ այլ պահուածքով, որպէսզի ինքդ քեզ հպարտութեան մէջ չգցես, իսկ նրան՝ յուսահատութեան:

Եւ հասկացրու, որ իրեն խոնարհ ցոյց տալու համար սուտ բան չասի, քանզի դա կը լինի ոչ թէ խոստովանութիւն, այլ՝ ստախօսութիւն: Թող

պարզապէս ասի այն, ինչ որ արել է: Եւ զգոյշ եղիր, որ դու նրա փոխարէն չխոստովանես, որը մեծ, ՇԱՏ մեծ անկարգութիւն է: Քանզի խոստովանութիւնը նրբաքնին դատաստան է, նրանում չպիտի որեւէ սուտ բան լինի, այլ ինչ որ արել է կամ մտքում ունի, այն պիտի արտայայտի բերանով, ի՛ր բերանով, եւ ոչ թէ քո, քանզի քո բերանը պիտի քո՛ մեղքերը խոստովանի, ոչ թէ ուրիշինը:

Իսկ եթէ դու խոստովանես նրա փոխարէն, ստիպուած նա՛ պիտի «ողորմեսցի Աստուած»-ն ասի քեզ համար: Ուրեմն պէտք է զգոյշ լինես այդպիսի անկարգ բաներ անելուց, որը հոգու մեծ տգիտութիւն է, մտքի կուրութիւն եւ խոստովանութեան գեղեցիկ կարգի խափանիչ:

Նաեւ ասա քեզ խոստովանողին. «Որդեա՛կ, քեզ խոնարհ երեւացնելու համար յանկարծ սուտ բաներ չխառնես խոստովանութեանդ, այլ ինչ որ արել ես եւ ինչ որ մտքում ունես պահած, այն ասա պարզապէս: Ոչ աւելի, որպէսզի չդապատարտ-

ուես ստախօսութեան համար եւ ոչ պակաս, որպէսզի չզրկուես թողութեան շնորհից»:

Այս մասին թերեւս մէկը կարող է հարցնել. «Ինչպէ՞ս է, որ Սուրբ հայրերից շատերը իրենց աղօթքներում յանձն են առնում զանազան մեղքեր, որոնք անձամբ չեն գործել»: Ասեմ, որ դրանք ոչ թէ մարդուն ուղղուած յայտարարութիւններ են, այլ աղօթական խօսքեր՝ ուղղուած Աստծուն: Դրա համար այդպիսի խոստովանութիւնը անհատական չի կոչւում, այլ համարւում է անձի խոնարհութիւն Աստծու անհուն ողորմութեան առջեւ:

Հակառակ դէպքում, ինչ որ ըստ ամենայնի յանձն է առնում մէկը, հարկ կը լինի ըստ դրա՛ ապաշխարութիւն ընդունել, ինչպէս պահանջում է անհատական խոստովանութեան սովորական կարգը:

Խոստովանողին խրատիր նաեւ, որ եթէ տարակուսանք ունի ինչ-ինչ մեղքեր գործած լինելու համար, թէ գործե՞լ է արդեօք կամ չի գործել, նաեւ

դրանց մասին թող ասի այսպէս. «Այսինչ մեղքի մասին կասկած ունեմ, չգիտեմ՝ գործել եմ, թէ ոչ»: Իսկ եթէ որեւէ արարքի մասին կասկած ունի՝ համարել այն մեղք, թէ ոչ, իր գիտելիքը բաւարար չէ դա պարզելու համար, եւ որպէսզի մեղքը որպէս ոչ մեղք ճանաչելով՝ չվնասի իր հոգին, պէտք է այն նոյնպէս դնի խոստովանահօր առաջ՝ ասելով. «Այսինչ արարքը գործեցի, բայց չգիտեմ՝ մեղք է, թէ ոչ»:

Եւ երբ բոլոր մեղքերը կատարելապէս խոստովանի, այնժամ ապաշխարութիւն սահմանիր նրա համար ըստ գործած մեղքի՝ ծանր լինի այն, թէ թեթեւ, քանզի մեղուցեալը առանց ապաշխարութեան չպէտք է արձակուի, թէկուզ խիստ փոքր լինի մեղքը:

Մեղքերի թողութիւնը երեք կերպ է լինում՝ **զղջում** Աստծու առաջ, **խոստովանութիւն** եւ **ապաշխարութիւն**: Այս երեքից մէկը եթէ պակասի, խորհուրդը կատարեալ չի լինի: Քանզի ինչպէս սրտով խոստովանում ենք մեղքը, բերանով ար-

տաբերում ենք եւ գործով կատարում, այդպէս էլ պէտք է սրտով գարշենք մեղքից, բերանով մեզ ամբաստանենք եւ գործով պատժենք ապաշխարութեան վաստակով:

Մէկը թերեւս կարող է հարցնել, որ եթէ առանց ապաշխարութեան մեղքերի ներում չի լինում, ուրեմն անտեղի՞ է խոստովանելը: Այս մասին վարդապետներն ասում են, թէ խոստովանութիւնն այնքան շնորհ ունի, որ յաւիտենական պատիժը փոխարկում է ժամանակաւորի: Քանզի երբ մեղանչում ենք, Աստծու արդար իրաւունքին ենք ենթակայ դառնում, բայց երբ զղջում եւ խոստովանում ենք եւ այդկերպ մեզ փոխում ենք դէպի լաւը, նոյնպէս էլ գթած ու ողորմած Աստուած յաւիտենականը փոխում է աւելի մեղմ՝ ժամանակաւոր պատժով: Արդարադատ լինելով՝ չի կամենում առանց պատժի թողնել մեղսաւորին, ողորմած լինելով՝ յաւիտենական եւ անտանելի պատիժը փոխարկում է

ժամանակաւոր, մեղմ նեղութեամբ ապաշխարութեան:

Եւ ապաշխարութիւնը երեք մեծագոյն շնորհներ ունի:

ա. Վերացնում է յաւիտենական պատիժը եւ պարգեւում է յաւիտենական կեանք:

բ. Ինչ բարիք որ ունէինք եւ մեղանչելիս կորցրել էինք, այդ ամէնը վերստին մեզ է վերադարձնում:

գ. Ցանկապատ ու պարիսպ է կանգնեցնում ապագայի համար, քանզի ինչպէս պարտէզի ու այգու սահմանները փշով ու տատասկով պատում ենք, որպէսզի կենդանիները չմտնեն ու ապականեն բերքը, այնպէս էլ ապաշխարութիւնը, որ մարմնի մի փոքր դժուարութիւն է, պարսպում եւ պահպանում է մեզ մեղքի անասնական գործերից: Դրա համար Տէրը ասաց. «Մտէ՛ք նեղ դռնով» (Մատթ. 7:13):

Հենց ինքը՝ տիեզերքի Փրկիչը ապաշխարութեան պատուականութիւնը մեզ բացայայտելով՝

ասում է. «Ուրախութիւն կը լինի երկնքում մի մեղաւորի համար, որն ապաշխարում է» (Ղուկ. 15:7):

Բայց երբ ապաշխարութիւն սահմանես մեղուցեալի համար, մեծ խոհեմութիւն պիտի ունենաս այն գործի դնելու համար: Քանզի **ինչպէս մարմնաւոր հմուտ բժիշկը օգտաւէտ սպեղանիով բժշկում է մարմնաւոր ախտը, այդպէս էլ հոգեւոր բժիշկը պէտք է ճշգրիտ ապաշխարութիւն սահմանի** եւ ոչ թէ նշանակի՝ ինչ որ այդ պահին լեզուին գայ: Այսինքն՝ այնպիսի ապաշխարութիւն պէտք է նշանակուի մեղուցեալի համար, որ կարողանայ կտրել նրան մեղքի սովորական դարձած ախտից:

Զորօրինակ՝ եթէ մէկը որկրամոլ է, չպէտք է նրան ծնրադրութիւն նշանակել որպէս ապաշխարութիւն, քանզի դա, որկրամոլութեանը անհամապատասխան լինելով, չի կարող տուեալ անձին հետ պահել իր սովորութիւնից: Այլ պէտք է որկրամոլին նշանակել պահեցողութեան ա-

պաշխարութիւն, որ համապատասխան է որկրամոլութեանն ու կասեցնում է այն:

Ծնրադրութիւնը համապատասխան է ծուլութեանը, քանզի ինչպէս պահեցողութիւնն է կասեցնում որկրամոլութիւնը, այնպէս էլ ծնրադրութիւնը մերժում ու եղծում է ծուլութիւնը: Նաեւ պէտք է իմանալ, ինչով որ մեղանչում է մարդ, նոյնով պէտք է պատիժ սահմանել: Օրինակ՝ եթէ հպարտացել է, պէտք է պատժել, որպէսզի խոնարհ եւ անարժան համարի իրեն Քրիստոսի առաջ, որպէսզի անձնիշխան կամքով ստանձնած վերամբարձ գոռոզութիւնը նուաճուի եւ սանձահարուի:

Ահա այդպէս խոհեմաբար դատելով եւ քննելով՝ ճշգրիտ սպեղանի պէտք է դնել իւրաքանչիւր անձի հոգեկան խոցուած տեղին, ինչպէս ցոյց տուեցինք վերեւում՝ մոլութիւնների մասին խօսելիս: Ապաշխարութեան ժամանակ չպէտք է մոռացութեան մատնել միւս առաքինութիւնները՝ մտածելով, թէ միայն այս մէկն է ինձ հար-

կաւոր: Դա հակառակ է առաքեալի ասածին. «Եթէ մէկը ամբողջ օրէնքը պահպանի, բայց միայն մէկ բանով սայթաքի, պարտապան կը լինի ամբո՛ղջ օրէնքին» (Յակ. 2:10):

Դա նման է, երբ մէկը յաճախակի ծնրադրի, բայց բարկութիւնը չսանձի: Կամ հեզութիւն յանձն առնի, բայց որովայնին ծառայելը չմոռանայ: Կամ թէ ծոմապահութեամբ իր մարմինը ճնշի, բայց անկարգ խօսելուց չդադարի: Կամ էլ բոլոր առաքինութիւնները պահպանի, բայց անգութ ու անողորմ լինի: Ի՞նչ օգուտ կը լինի այդ ամէնից:

Եթէ մէկը ամէն ինչով գեղեցիկ լինի եւ միայն տեսողութիւն չունենայ, արդեօք այդ գեղեցկութիւնները անտեսելով՝ կոյր չե՞ն կոչի նրան: Դա վերաբերում է նաեւ հովիւին. քանզի եթէ բոլոր առաքինութիւնները պահպանի, բայց հպարտ լինի կամ բարկացող, արատաւոր է նրա հոգին Աստծու առաջ, եւ այդ մէկ արատը բաւական է հոգին կործանելու համար: Դրա համար է Տէրն

ասում. «Կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն է կատարեալ» (Մատթ. 5:48): Կամ նոյնն է թէ՝ ապաշխարութեան ողջ ընթացքում բարի գործեր անի, բայց մնացած ժամանակը ծուլութեամբ անցկացնի: Կամ՝ ի՞նչ օգուտ լուացումից, եթէ նորից պիտի աղտոտուի: Կամ ի՞նչ օգուտ հիւանդի բուժումից, եթէ դա չպիտի տանի առողջացման:

Դա նման է այնպիսի խորտակուող նաւի, երբ նրա բոլոր մասերը շինես ու ամուր միացնես, բայց հողմի բերանը գցես եւ հոգ չտանես, թէ ուր է լողում:

Ահա այսպիսի խօսքերով խրատի՛ր խոստովանողին, որ անմտութեամբ իր կեանքը չանցկացնի ու յաւիտեան կորստեան մատնուի: Այս ամէնի համար խրատի՛ր նաեւ, որ չյապաղի խոստովանութեան գալու, որ չլինի թէ մեղք գործելը սովորական դառնայ, այլ մեղանչելուց անմիջապէս յետոյ շտապի խոստովանելու իր սխալները, ինչպէս պատգամում է եկեղեցու պատուիրանը:

Քանզի **որքան հնանան մեր մեղքերը մեզ վրայ, այնքան կնուազի մեր մէջ Աստուծոյ քաղցր գութը**: Մանաւանդ որ չգիտենք, թէ «երբ տանտէրը կը գայ»:

Իսկ եթէ մեղք գործելուց յետոյ ծուլանայ ու չգայ քեզ մօտ, մի՛ անտեսիր նրան եւ դու ի՛նքդ գնայ նրա մօտ եւ խրատի՛ր սիրով, աստուածային գրքերի յորդորական խօսքերով, որպէսզի գայ խոստովանութեան եւ թօթափի իրենից մեղանչումները: Քանզի դու նրա դէտն ու հովիւն ես, պարտաւոր ես մշտապէս զգուշանալ նրա հոգու համար, որպէսզի չկորսուի: **Քո հոգն ու մտածումները ուրիշ բանի վրայ չպէտք է սեւեռուեն, այլ միայն նրանց հոգիների փրկութեան վրայ, ովքեր քո հովութեան ներքոյ են**: Քանզի Աստուած ասում է քեզ Եզեկիէլի միջոցով. «Եօթ օր յետոյ Տէրը խօսեց ինձ հետ ու ասաց. «Մարդո՛ւ որդի, ես քեզ դէտ կարգեցի Իսրայէլի այդ տանը. ...դու այլեւս չես զգուշացնելու նրան, ոչ էլ ասելու ես անօրէնին, որ զգուշանայ, յետ դառնայ իր չար

ճանապարհից ու ապրի: Այդ անօրէնն իր անօրէ-նութեան մէջ է մեռնելու, եւ նրա արիւնը քեզնից եմ պահանջելու: Իսկ եթէ դու անօրէնին զգու-շացնես, ու նա յետ չդառնայ իր անօրէնութիւնից եւ իր ճանապարհից, այդ անօրէնն իր անօրէ-նութեան մէջ է մեռնելու, իսկ դու քեզ փրկելու ես» (Եզէկ. 3:17-19):

Սուրբ Եփրեմն այս մասին ասում է. «Զգոյշ եղիր, ո՛վ քահանայ, եւ քո աչքերին թող քուն չգայ, քանզի առջեւում մեծ դատաստանն է, որ ոչ միայն անձամբ քեզ է վերաբերելու, այլեւ նրանց, որոնց ընծաները ընդունում ես, ուրեմն հաշիւ ես տալու ահեղ ու արդար դատաստանի առաջ: Մանա-ւանդ պիտի ձգտես քո անձը բարի օրինակ դարձնել ժողովրդի համար, որպէսզի չլինի թէ վատթար վարքով այլոց գայթակղութեան պատ-ճառ լինես: Եւ շահելու փոխարէն կորցնես նրան»:

Այնժամ չես կարող ասել, թէ խրատեցի, բայց ինձ չլսեցին, քանզի **ի՞նչ օգուտ, երբ խօսքով**

խրատես հարիւրներին, սակայն չար գործերովդ գայթակղես ու կորստեան մատնես հազարներին: Եթէ դու բարկութեամբ կամ արբեցողութեամբ կամ կնամոլ արծաթասիրութեամբ ու պճնամոլ փառամոլութեամբ եւ զանազան այլ մեղքերով ես մոլորուած, ինչպէ՞ս կարող ես այլոց խրատել հեռու մնալ նման ախտերից. չէ՞ որ նախ ի՛նքդ պիտի բարի գործես եւ նոր այլոց ուսուցանես: Ինչպէս Յիսուսը, որպէս ամէնայն ինչի բարի օրինակ, նախ ինքն էր անում, ապա ուրիշներին ուսուցանում:

Եթէ քո ժողովրդի առաջնորդը կամ հովիւն ես, ուրեմն պէտք է նման լինես քաջ հովիւին, որպէսզի կարող լինես ասելու՝ ահա ես եւ իմ մանուկները (Եսայի, 8:18): Իսկ եթէ ոչ՝ մեծ դատապարտութիւն ես կրելու: Քանզի որքան անձեր շահես, նոյնքան պսակ կընկալես, նոյնպէս եւ որքան անձանց գայթակղեցնելով կորստեան մատնես քո անուղղայ գործերով, նոյնքան պատիժ ես կրելու: Եւ քեզ վրայ կը խնդայ չարեաց

մայր սատանան՝ ասելով. «Ահա չար հովիւն ու իր մանուկները»:

Որից թող փրկի Տէրը բոլոր հաւատացեալ-ներին, յանուն իր անուան:

Թէ օրինակ բարեաց լինես,
Փառքի պսակ դու կընդունես:

ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համառօտ խրատ

Այժմ խօսենք եկեղեցու խորհուրդների զօրութեան մասին, որ վերը արդէն յիշատակել ենք:

Նախ, խորհուրդները պիտի կատարուեն մեծ երկիւղածութեամբ, դրանք չպէտք է կատարուեն որպէս մարմնաւոր մի յանձնառութիւն՝ զրոյցի, ծաղրաբանութեան տրուելով կամ այլ անպարկեշտ վարքով, քանզի Աստծու պատուէրն է, որ կատարում ենք, ոչ թէ մարդու գործը: Քանզի մարդու զօրութիւնը ինչպէ՞ս կարող է սատանայի որդուն Աստծու որդիներ դարձնել: Կամ երկու մարմինը մէկ մարմնում միաւորել: Կամ հացն ու գինին փոխարկել Քրիստոսի մարմնի ու արեան:

Ս. Հոգու շնորհների միջոցով է, որ արւում են դրանք:

Երբ սուրբ մկրտութիւն կամ այլ խորհուրդ կատարելու լինես, պէտք է նախ ծոմ պահես, իսկ նախքան կմօտենաս սուրբ խորհրդին՝ նախապատրաստուես սաղմոսներով, աղօթքներով ու «մեղայ» ասելով, որպէսզի սուրբ հոգու աներեւոյթ շնորհներից այրուելով չտոչորուես: Եւ իմացիր, որ ըստ մկրտութեան խորհրդի՝ նուիրեալին բոլոր անդամներով ջրի մէջ պիտի թաթախել, ըստ դրոշմի խորհրդի՝ օծել ճակատը, իսկ այլ անդամների օծումը կատարել ըստ վերջին օծման խորհրդի:

Եւ մինչ կատարում ես սուրբ խորհուրդը, միտքդ պիտի սեւեռած պահես այդ խորհրդի նպատակի վրայ, որով Աստծու գիտութեան շնորհներն են ընձեռւում նուիրեալին, ինչպէս վերեւում յիշեցինք:

Արդ, **մկրտութեան** խորհրդի նպատակն է, եւ դա մտքումդ պիտի ունենաս, որ այս երեխան, որ եկել է մկրտուելու իմ ձեռքով եւ Աստծու հոգու շնորհներով, պիտի ազատուի սկզբնական մեղքից եւ լինի որդի Աստծու եւ ժառանգորդ երկնքի արքայութեան:

Դրոշմի խորհրդի նպատակն է, եւ դա մտքումդ պիտի ունենաս, որ իմ ձեռքով եւ սուրբ հոգու շնորհներով այս երեխայի ճակատը կնքւում է եւ անուանւում ու դառնում է Քրիստոսի զինուոր, հաստատւում է քրիստոնէական հաւատքի մէջ եւ զօրանում՝ աներկիւղ դաւանելու Քրիստոսի հաւատը:

Վերջին օծման խորհրդի նպատակն է, եւ դա մտքումդ պիտի ունենաս, որ իմ ձեռքով եւ սուրբ հոգու ներգործութեամբ կատարուած այս օծումով նուիրեալը կ’ազատուի փոշետեսակ մեղքե-

րից, կը զօրանայ՝ պատերազմելու ընդդէմ դեւերի վերջին ժամանակներում:

Հաղորդութեան խորհրդի նպատակն է, որը մտքումդ պիտի ունենաս, որ իմ ձեռքով եւ սուրբ հոգու ներգործութեամբ այս հացը դառնում է Քրիստոսի ճշմարիտ մարմինը, նոյնպէս եւ գինին դառնում է Քրիստոսի ճշմարիտ արիւնը:

Ապաշխարութեան խորհրդի նպատակն է, եւ մտքումդ պիտի ունենաս, որ ապաշխարութեան եկած այս մեղուցեալ մարդը այժմ իմ միջնորդութեամբ եւ սուրբ հոգու շնորհներով կ'ազատուի իր բոլոր տեսակի մեղքերից եւ դարձեալ կ'ընդունի բոլոր բարի վաստակները, որ կորցրել էր մեղանչելով, ու վերստին բարեկամ կը դառնայ Աստծուն, որին թշնամացել էր մեղանչելով:

Պսակի խորհրդի նպատակն է, եւ մտքումդ պիտի ունենաս, որ այս այր ու կինը իմ միջնորդութեամբ եւ Աստծու հոգու շնորհներով դառ-

նում են մէկ մարմին, վերանում է նրանց մէջ շնութիւնը, եւ հաստատւում է սուրբ ամուսնութիւն՝ զաւակներ ծնելու եւ Աստծու երկիւղով սնուցելու համար:

Եւ ահա այսպէս՝ ուշադիր նպատակադրումով պիտի կատարես սուրբ խորհուրդները, որպէսզի քահանայական բարձր աստիճանդ քեզ համար դատապարտութեան առիթ չլինի՝ աստուածագործութեան սուրբ խորհուրդները տգիտաբար եւ առանց նպատակադրութեան կատարած լինելու պատճառով:

Իմացիր նաեւ, ինչպէս որ ասում է Սուրբ Վարդանը, որ եկեղեցու սուրբ խորհուրդը եւ Աստծու անհամեմատելի շնորհները չպէտք է արծաթով վաճառուեն, կամ սահմանուի կնքադրամ ու պսակադրամ: Խիստ մեծ անկարգութիւն է դա: Քանզի եթէ ամէնապատուական անգին քարերի համար անհնար է գին սահմանել, որքա՛ն առաւել

եւս անպատեհ է աստուածային անվաճառ խորհուրդը այս կամ այն արծաթի գնի մէջ պարփակել:

Բնաւ չի հրամայւում ոչ մի բան չառնել ժողովրդականներից, քանզի ովքեր սուրբ սեղանի սպասաւորներ են, նոյն սեղանից պիտի ճաշակեն, իսկ ովքեր Աւետարանն են քարոզում, պիտի Աւետարանի մէջ մնան: Ու ասուած է՝ կալում աշխատող եզան դունչը չպիտի կապել, կամ՝ մշակն արժանի է իր վարձին (Բ. Օր. 25:4): Ու դարձեալ՝ եթէ մենք ձեր մէջ հոգեւոր բաներ սերմանեցինք, մե՞ծ բան է, եթէ ձեզնից մարմնաւոր բաներ հնձենք (Ա. Կորնթ. 9:11): Ձեր առատութիւնը թող լցնի նրանց պակասութիւնը, որ նրանց առատութիւնն էլ լցնի ձեր պակասութիւնը (Բ. Կորնթ. 9:14):

Սուրբ գրքում կարելի է գտնել նման շատ այլ խօսքեր, որոնք չեն արգելում եկեղեցականներին

վայելելու իրենց անհրաժեշտ բաները իրենց ժողովրդից: Բայց ինչ որ մարմնաւոր պահանջ-մունքի համար են սահմանում ու պահանջում եկեղեցականները, ա՛յն է արգելում աստուա-ծային հրամանը եւ սուրբ եկեղեցու բարեկար-գութեան կանոնը, որպէսզի աստուածային ան-վաճառ շնորհների վաճառականների չվերած-ուէք: Իսկ ինչ որ կամովին եւ յօժար սրտով են նուիրում, պէտք է դա ընդունել որպէս ողոր-մութիւն եւ նուէր, եւ ոչ թէ որպէս վարձ աշխա-տութեան դիմաց: Քանզի եթէ ժողովրդի նուէրը ընդունես որպէս վարձ աշխատանքի դիմաց, այլեւս մաս չես ունենայ Քրիստոսի բարիքից, քանզի ընդունել ես գործիդ հատուցումը, մանա-ւանդ կարող ես անգամ դատապարտուել, քանզի Աստծու շնորհները, որ քոնը չէին, վաճառում ես արծաթով:

Կարող ես ասել, որ եթէ մենք չպահանջենք, ապա մարդիկ ոչինչ չեն տայ մեր մարմնաւոր ապրուստը հոգալու համար: Այս մասին Սուրբ Ներսէս Լամբրոնացին ասում է. «Եկեղեցականներիս անկարգութիւնն է, երբ մարդկանց սովորեցնում ենք նման վճարի: Քանզի երբ մենք՝ եկեղեցականներս, հակառակամտութեամբ գին ենք սահմանում աստուածային շնորհներին ու պահանջում ենք արծաթով վճարել դրանց համար, հետեւաբար ժողովուրդն էլ, հաւատքից անկում ապրելով, հոգ չի տանի, որ անհրաժեշտ է միշտ հոգալ եկեղեցու սպասաւորի կարիքները, եւ լիովին կը մոռանայ, որ նրանք միջնորդ եւ մատակարար են աստուածային խորհուրդների: Քանզի եթէ մենք՝ քահանաներս, հաւատացեալների կողմից որպէս անմիտներ ընդունուենք եւ վաղ ժամանակից սկսենք անտեսել եկեղեցու աւանդական բարեկարգութեան սահմանները ու

դառնանք մաքսաւորներ Աստծու օրէնքների համար, ապա նրանք՝ աշխարհականները, վայրենի բարք ձեռք կը բերեն եւ կը սկսեն խօսել ու արհամարհել եկեղեցական իշխանութիւնն ու այլեւս յոյս ու հաւատ չեն ունենայ մեր հանդէպ, անգամ որպէս մարմնական իշխանների: Կը մոռանան ու մտքում աղօտ պատկերացում չեն ունենայ, որ հարկաւոր է հնազանդ լինել եկեղեցու վերակացուներին եւ Աստծու սիրով հոգալ նրանց մարմնական կարիքները: Եւ այնքան բազմապատկած կը լինենք մեր անկարգութիւնը նրանց աչքում, որ ուղղութեան յիշատակն անգամ կարող է մոռացուել: Եւ կը մոռանան ամենեւին, որ քահանաներն ու եպիսկոպոսները Աստծու օրէնքներով են առաջնորդում ժողովրդին»:

Թող տէրը ե՛ւ հոգեւորականների,ե՛ւ ժողովրդի բարեկարգութեանը ճիշտ ուղղութիւն տայ: Ամէն:

ՉԱՓԱԾՈՅ ԵՐԿՏՈՂԵՐ

Իմաստութիւն շինեաց իւր տուն,
Կանգնեաց ի նմա եօթն ընտիր սիւն։

Նա՛ հաւատայ ճշմարտապէս,
Որ միշտ առնէ գործոց հանդէս։

Յոյս աներկմիտ ի սուրբ սրտէ
Ո՛չ զոր երբէք յամօթ առնէ։

Քեզ օգնութիւն վասն բարւոյ
Տուան պարգեւք հոգւոյն սրբոյ։

Եօթն այսոքիկ արմատք չարին,
Անթիւ բերիւք պտղաբերին։

Մեղքն է զազիր քան զամենայն գարշելի,
Որ զմարդն առնէ իւր արարչին ատելի։

Թէ ո՛չ դիցես դեղ մեղաց,
Զրկեալ լինիս ի կենաց։

Յորժամ մեղօք մոլորիս,
Անբանիցն նմանիս։

Լե՛ր հանապազ զմեղս քո խոստովան,
Զի մի՛ անշէջ հրոյն լիցիս պարտական։

Թէ օրինակ բարի այլոց լինիցիս,
Պսակ փառաց ի Քրիստոսէ ընկալցիս։

Ի բաց ընկեա՛ զքոյդ չարիս,
Զի աստուծոյ հաճոյասցիս։

Թէ զղջանաս ի մեղաց,
Ո՛չ հեռանաս ի շնորհաց։

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐԻ

Պաղտասար Դպիրը՝ Պաղտասար Գրիգորեան (Կեսարեան) Կոստանդնուպոլսեցին, ծնուել, ապրել ու ստեղծագործել է Կ. Պոլսում 1683 – 1768 թթ.:

Խիստ լայն է նրա գործունէութեան ոլորտը, եղել է քարոզիչ, մանկավարժ, բանաստեղծ, երաժիշտ, գիտնական, հրատարակիչ:

Ծնողները՝ Գրիգորն ու Թուրվանդը, Կեսարիայից գաղթել են Կ. Պոլիս, որտեղ ծնուել է Պաղտասար Դպիրը: Նախնական կրթութիւնը ստացել է Կ. Պոլսի դպրոցներում: 1741 թուականին Յակոբ Բ Նալեան Պատրիարքի կողմից նշանակուել է տեսուչ Գում Գափու թաղամասի դպրոցներից մէկում, ուր դասաւանդել է քերականութիւն, մայրենի լեզու, երաժշտութիւն եւ այլ առարկաներ: Պաղտասար Դպիրի սաներից շատերին յետագայում տեսնում ենք հայ մշակոյթին եւ եկեղեցուն ծառայելիս, որոնց շարքում են՝ Սիմեոն Ա. Երեւանցի կաթողիկոսը, Պետրոս Ղափանցին եւ այլք:

Իր ժամանակին Պաղտասար Դպիրը Կ. Պոլսի նշանաւոր մտաւորական եւ ուսուցիչ էր: 1736-1760 թթ. կազմել եւ հրատարակել է հայերէն լեզուի դասագրքերի շարք՝ գրաբար ու աշխարհաբար լեզուներով, որոնցով տասնամեակներ շարունակ դասաւանդում էին հայկական դպրոցներում:

Պաղտասար Դպիրը հեղինակել է տարբեր թեմաներով բանաստեղծութիւններ, հիմնականում՝ գրաբարով: Նրա «Տաղարան Փոքրիկ Պաղտասար Դպրի Ասացեալ Ջանազան Գունով» (1723) գիրքը յաւելումներով եւ վերաքաղներով լոյս է տեսել եօթն անգամ: Նա գրել է նաեւ հայատառ թուրքերէն բանաստեղծութիւններ:

Որպէս գիտնական-հայագէտ՝ կազմել, խմբագրել, սրբագրել եւ հրատարակել է պատմական, փիլիսոփայական, աստուածաբանական բովանդակութեան բազմաթիւ գրքեր: Դրանց շարքում յիշատակելի են՝

- Ջենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ» (1719),
- «Գիրք որ կոչի Հարանց վանք» (1720),
- Առաքել Սիւնեցու «Ադամագիրքը» (1720),

- Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (1726),
- Սիմէոն Ջուղայեցու «Գիրք Տրամաբանութեան» (1728),
- Գրիգոր Տաթեւացու «Գիրք Հարցմանց» (1729),
- Դաւիթ Անյաղթի «Գիրք Սահմանաց» (1731) եւ այլ աշխատութիւններ:

Ստորեւ ներկայացնում ենք Պաղտասար Դպիրի հեղինակած երկերի հիմնական հրատարակութիւնները[1]:

- Շահաւէտ, Կ. Պոլիս, 1720, վերահրատ. 1750:
- Այբբենարան, Կ. Պոլիս, 1723:
- Քերականութիւն (գրաբարի), հատոր Ա-Բ, Կ. Պոլիս, 1736-1738, վերահրատ. Կ. Պոլիս, 1771, Մադրաս 1791:

---

[1] Պաղտասար Դպիրի կազմած, խմբագրած, հեղինակած գիտական ու գեղարուեստական երկերի, այդ թւում՝ անտիպ ստեղծագործութիւնների ամբողջական ցանկը տրուած է Պաղտասար Դպիրի Տաղերի լիակատար ժողովածուի մէջ, աշխատ. Հ. Բախչինեանի, Երեւան, 2007:

- Կրթութիւն Քրիստոնէական (հայատառ թուրքերէն), Կ. Պոլիս, 1742:
- Տաղարան սիրոյ եւ կարօտանաց, Կ. Պոլիս,1752:
- Ցանկ Գիրք Նոր Կտակարանի, Կ. Պոլիս, 1753:
- Քերականութիւն (աշխարհաբար), Կ. Պոլիս, 1760:
- Կրթութիւն Քրիստոնէական, Կ. Պոլիս, 1777:
- Օրինակք բարեւագրաց, Կ. Պոլիս, 1786:
- Կրթութիւն քրիստոնէական պաշտօնի, Կ. Պոլիս, 1816:
- Ժամանակագրութիւն / «Մանր ժամանակագրութիւններ» ժողովածու, XIII-XVIII դդ., հտ. Ա, Երեւան, 1951:
- Տաղիկներ սիրոյ եւ կարօտանաց / Песни любви и тоски, հրատ. պատրաստեցին Շուշանիկ Նազարեան եւ Ասատուր Մնացականեան/, Երեւան, 1958:
- Տաղիկներ, Երեւան, 1985:
- Տաղեր (Լիակատար ժողովածու), աշխատասիրութեամբ Հ. Բախչինեանի, Երեւան, 2007:

«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ՏՊԱԳՐՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ա.

Յովհան Ոսկեբերան, Ապաշխարութեան պտուղներ (Քարոզներ եւ ճառեր), 2019



Բ.

Յակոբ Նալեան, Առաքինի կեանքի ուղին (Հոգեւոր զրոյցներ), 2020



Գ.

Յովնան Արք. Տէրտէրեան, Պատգամներ (Ասոյթներ եւ Թեւաւոր խօսքեր), 2020



Դ.

Կարապետ Արք. Պալատեցի, Տարեկան Քարոզգիրք (Ընտրանի), 2021



Ե.

Գարեգին Եպս. Խաչատուրեան, Հովիւի խօսքեր, 2021



Զ.

Պաղտասար Դպիր, Գրքոյկ շահաւէտ, 2022

«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐ - Զ

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ

ԳՐՔՈՅԿ ՇԱՀԱՒԷՏ

Գրաբարից աշխարհաբար փոխադրեց՝
Նորայր Պողոսեան
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Խմբագիր՝
Աստղիկ Կարապետեան
Բանասիրական գիտ. թեկնածու

Գրաբար բնագրի մուտքագրող՝
Հռիփսիմէ Կոստանեան

Տպագրութիւն ԱՄՆ Արեւմտեան թեմի

Լոս Անջելէս

2022